



ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՅՈՒՇԱՏԵՏՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Գլխավոր աղբիւրը՝
Հրանդ Պաստրմաճեանի «Հայոց պատմութիւն»-ը
(Ֆրանսերէնէ թարգմանութիւնը Մ. Իշխանի)

«Համազգային», Պէյրութ
Ա. Հատոր 1954, Բ. հատոր 1958
(Սկիզբէն մինչև 1923՝ Լոզանի դաշնագիրը)

(Գրքին ամփոփումը կատարած է
Վրէժ-Արմէն Արթինեան)

Առաջին հրատարակութիւն՝
Հ.Ե.Դ. «Լևոն Շանթ» խումբի
(Մոնթրէալ, 1967)



Վերահրատարակութիւն՝
ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի
դաստիարակչական յանձնախումբի

Մոնթրէալ
2025

Զի թէպէտ եւ եմք ածու փոքր,
Եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ,
Եւ զօրութեամբ տկար,
Եւ ընդ այլով, յով անգամ նուաճեալ թագաւորութեամբ,
Սակայն բազում գործք արութեան
Գտանին գործեալ և ի մերում աշխարհիս
Եւ արժանի գրոյ յիշատակի...

Մովսէս Խորենացի
Ե. դար

Գտնուելով Արևելքի եւ Արևմուտքի սահմանագծում, Հայաստանը միշտ էլ կապող օղակ է հանդիսացել միջազգային փոխանակութեան սիստեմում: Սակայն հենց այդ առաւելութիւնն էլ նրան կռուախնձոր է դարձրել Արևմուտքի եւ Արևելքի՝ միմեանց դէմ պայքարող տէրութիւնների միջև: Պատմական այդպիսի դաժան պայմաններում կոփուեց ժողովուրդը՝ մշակելով իր մէջը ազգային բնաւորութեան որոշակի գծեր՝ տոկունութիւն, մարտունակութիւն, յամառութիւն, սէր դէպի աշխատանքը եւ ստեղծագործական ունակութիւն, որով նա կերտել է իր մշակոյթի գլուխ գործոցները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՏԼԱՍ
Երևան, 1961

Մենք բուռ մը հող աշխարհի վրան
Ժայռի պէս հաստատ, դաշտի պէս յուռի:

Ժագ Ս. Յակոբեան

Կողքի գեղանկարը՝ «Վահագն», «Անահիտ», «Հայկ» (հատուածներ),
Ռազմիկ Պերթիգեանի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ ▶ 4

Ա. ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ԵՒ ՄԵՆՔ ▶ 5

Բ. ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՃՈՒՄԸ ▶ 8

Գ. ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ▶ 12

Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՀՈՈՄԻ
ԵՒ ՊԱՐԹԵՒՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ▶ 16

Ե. ՔՐԻՍՏՈՆԵՒԹԵԱՆ ՈՐԴԵԳՐՈՒՄԸ ▶ 20

Զ. ՔՐԻՍՏՈՆԵՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ▶ 26

Է. ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ▶ 32

Ը. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԲԻԶԱՆԴԻՈՆ ▶ 38

Թ. ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ▶ 39

Ժ. ՀԱՅԱՍՏԱՆ ԹՈՒՐԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ ▶ 48

ԺԱ. ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ▶ 54

ԺԲ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ ▶ 59

ԺԳ. ՈՌԻՄԻԱ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ ▶ 61

ԺԴ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ▶ 64

ԺԵ. ՊԱՅՔԱՐԸ ԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ ▶ 66

ԺԶ. ՑԱՐԱԿԱՆ ՈՌԻՄԻԱՆ ՀԱՅՈՑ ԴԷՄ ▶ 72

ԺԷ. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐՈՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԸ Ա. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ▶ 74

ԺԸ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ▶ էջ 77

ԺԹ. ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ Կ'ԱՌՆԷ ▶ 79

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ` 1918–2024 ▶ 86

ԱՅԼ ԱՂԲԻՐՆԵՐ ▶ 100

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ ▶ 100

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Այս ամփոփ հատորը հանրագիտական-ցուցակագրական բնոյթի հրատարակութիւն մըն է, ուր կարելի է դիտութեամբ գտնել մեր պատմութեան գլխաւոր փուլերուն դերակատար հանդիսացած դէմքերու անունները եւ նոնց գործունէութեան երեսները՝ վայրերու և թուականներու նշումով, ինչպէս նաև զինուորական, տնտեսական, ընկերային ու մշակութային որոշ երևոյթներու տեղեկագրութեամբ:

Այդ բոլորին լաւապէս ծանօթանալու համար հարկ է վերադառնալ բուն հատորին՝ *Histoire de l'Arménie* par Hrant Pasdermadjian, որ ֆրանսերէն լոյս տեսած է 1949-ին, կամ անոր հայերէն թարգմանութեան, կամ որոնել այլ աղբիւրներ, որոնցմէ ոմանք ցուցակագրուած են այս գիրքի վերջաւորութեան: Անկասկած այսօր կան մեր պատմութեան վերաբերեալ նոր տուեալներ, որոնք աւելցուած են նոթերու ձևով կամ նշուած են վերջաւորութեան՝ ընդհանրապէս քաղուած «Հայոց պատմութիւն – 12» հայրենի դասագիրքի ցուցակէն: Որոշ թուականներ կրնան քիչ մը տարբերիլ մէկ պատմաբանէն միւսը, սակայն այս ամփոփումին մէջ պահուած են առաւելաբար Պատմութեան նշած թուականները:

Հրանդ Պատմութեան՝ զաւակը Արմէն Գարոյի, ծնած է 1904-ին Թիֆլիս, նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է ժընև, քաղաքային ճարտարագէտի վկայականը ստացած է Ցիւրիխի բազմարուեստից վարժարանէն, առևտրական տնտեսութեան հետևած է Նիւ Եորքի Գոլոմպիա համալսարանը, ապա Կրընոպլի համալսարանէն ստացած է իրաւագիտութեան վարդապետի աստիճանը: Պատասխանատու պաշտօններ վարած է տնտեսական մեծ ընկերութիւններու մէջ, տնտեսական եւ ընկերային գիտութեանց դասախօս է եղած ժընևի համալսարանը: Վաղաժամ մահացած է 1954-ին: Հայոց պատմութեան, մշակոյթին ու Հայ դատի նկատմամբ մեծ եղած է իր սէրն ու ներդրումը:

Վ.Ա.Ա.

Ա. ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՄԱՆՈՎԸ

- 250.000 քառ. քմ, երկայնության 35 – 50 եւ լայնության 37 – 41 աստիճաններուն միջեւ:
- Հիւսիսէն՝ Սել ծով եւ Կովկասեան լեռներ,
 - հարաւէն՝ Միջերկրական ծով եւ Միջագետք,
 - արեւմուտքէն՝ Անատոլիո,
 - արեւելքէն՝ Կասպից Ծով:
- Ծովու մակերեսէն՝ 1000 – 2000 մ միջին բարձրութիւն:
- Լեռներ՝ Մեծ Մասիս 5160 մ, Արագած 4500 մ, Պոնտական, Տաւրոսեան,
- Արարատեան, Սիւնեաց լեռնաշղթաներ եւ այլն:
- Երեք մեծ լիճեր՝ Վանայ, Սեւանայ, Ուրմիոյ:
- Երեք մեծ գետեր՝ Արաքս, Եփրատ, Տիգրիս:
- Կլիման՝ խստաշունչ, ձմեռը՝ ցուրտ եւ երկարատեւ, ամառը՝ տաք:
- Օդը՝ մաքուր եւ զով, երկինքը՝ պայծառ, ջրերը՝ ջինջ:
- Բուսականութեամբ՝ հարուստ:
- Բազմատեսակ եւ անսպառ հանքային հարստութիւններով:
- Ժողովուրդը՝ արի եւ առնական, ազատասէր եւ կորովի, ընտանեկան զօրաւոր հպարտութեամբ. Արիական ցեղէն համարուած:
- Հայ լեզուն ինքնուրոյն՝ Հնդեւրոպական լեզուախումբին մէջ:

ՆԱԽԱՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՍ ՈՒՐԱՐՏՈՒ՝

Բ. դար, Ք. ա.

- Հիմնադրութիւն Ուրարտական թագաւորութեան՝ Արամէի կողմէ:
- Մայրաքաղաքը՝ Տուշպա (այժմ Վան). անառիկ ամրոց:

¹ Ըստ գիտական նոր վարկածներու, հայերը իրենց հայրենիքի բնիկներն են եղած աւելի՛ ինն ժամանակներէն. տես աղբիւր 1, էջ 30 – Վ-Ա.Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐԸ
THE MOUNTAINS OF ARMENIA



ՈՒՐԱՐՏՈՒ (Ք.Ա. 870-590)
URARTU (870-590 B.C.)



Թ. – Ը. դար

- Սարտուրի, Իշփիունի, Մենուաս, Արգիստիս Ա. եւ Բ. արքաներ:
- Խալտերը, Ուրարտուի բնակիչները, թշնամի եւ հակառակորդ՝ Ասորեստանի: Անոր դէմ յաճախ պատերազմներու ընթացքին անընկճելի:
- Զինակցութիւն հիթիթներուն եւ Սուրիոյ բնակիչներուն հետ՝ ընդդէմ Ասորեստանի:
- Յառաջացած քաղաքակրթութիւն, ջրաբաշխական ցանցեր, ճամբաներ, կամուրջներ, ճարտարապետութիւն: Մետաղներ, կղմինտր:
- Արմտիքներ, արօտավայրեր, անտառներ, հանքեր:

ԱՐՄԷՆՆԵՐՈՒ ԵՐԵՒՈՒՄԸ²

Է. եւ Զ. դարեր Բ. ա.

- Հայկ Նահապետի առաջնորդութեամբ, Արեւմուտքէն արիական Արմէններու մուտքը Ուրարտու: Սքանչելի մարտիկներ, բարձր լեռներու սիրահար: Խալտերու ծովումը:

Բ. ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՃՈՒՄԸ

Է. դար Բ. ա.

- Ասորեստանի կործանումը մարերու եւ քաղղէացիներու կողմէ: Պարոյր հայ իշխանը՝ մասնակից Նինուէի գրաւումին: Թագ՝ մարերէն:

590 – 559 Բ. ա.

- Մարական տիրապետութիւն:

Զ. դար Բ. ա.

- Հիմնադրութիւն Պարսից կայսրութեան՝ Կիւրոսի կողմէ: Հայերը անկախ:

529 Բ. ա.

- Մէկ տարի պատերազմ հայոց դէմ պարսիկ Պարեհ Ա.ի

² Ուրարտու (Արարատ) պետութեան սկիզբը կը նկատուի 870 Բ.ա. թուականը: Տես նաև ծանօթագրութիւն 1 – Վ-Ա.Ա.:



Գեղանկարները՝ Ռազմիկ Պերթիգեանի



կողմէ: Պատմութեան մէջ առաջին յիշատակումը
Հայաստանի՝ Պեհիսթունիի արձանագրութեան մէջ:

Ձ. եւ Ե. դարեր Ք. ա.

- Պարսկական տիրապետութիւն: Սատրապներ:
Յառաջդիմութիւն, մանաւանդ պատերազմական
արուեստին մէջ: Արտադրութիւն ձիերու, լաստերու եւ...
զինուորներու: Հայ զօրավարներ Դարեհի բանակին մէջ:

334 Ք. ա.

- Մեծն Աղեքսանդրի մուտքը փոքր Ասիա: Գրաւում
պարսկական կայսրութեան: Հայոց դէմ ոչինչ:
Հելլենիստական քաղաքակրթութեան մուտքը
Հայաստան:

322 Ք. ա.

- Երուանդ Ա. Որոնդէս, առաջին հայ թագաւորը:
Երուանդեան հարստութիւն. Արտաւազդ, Երուանդ Բ., եւ
այլն:

Դ. դար Ք. ա.

- Պայքար Սելեւկեաններուն դէմ:

215 – 190 Ք. ա.

- Սելեւկեան տիրապետութիւն: Մեծ Հայք եւ Փոքր Հայք:
Տեղական կառավարիչներ:

190 – 1 Ք. Ա. – ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

190 Ք. ա. – Արտաշէս Ա.:

- Մեծ Հայքի կառավարիչ Արտաշէս Ա. ինքզինք թագաւոր
կը հռչակէ:
- Երկիրը՝ անկախ, կ'ընդարձակէ դէպի հիւսիս:
Մայրաքաղաքը՝ Արտաշատ:
- Պետականացում հայ լեզուի:
- Կը հիւրասիրէ Աննիպալը՝ Կարթագենի փախստական
արքան, Հռոմի երդուեալ թշնամին
- Հռոմի համար Հայաստան զօրաւոր պատուար ընդդէմ
Սելեւկեաններուն:

190 Ք. ա. – Ջարեհ:

- Փոքր Հայքի կառավարիչ Ջարեհ նոյնպէս անկախ կը
հռչակէ իր երկիրը:

ԱՐՏԱՇԷՍԵՍՆՆԵՐՈՒ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆ (Ձ.Ա. 189 - Ջ.Ե. 1)
ARTASHESIAN KINGDOM (189 B.C. - 1 A.D.)



159 – 149 Ք. ա. - Արտաւազդ Ա.:

149 – 123 Ք. ա. - Տիգրան Ա.:

123 – 95 Ք. ա. - Արտաւազդ Բ.:

- Զարգացումի, զօրացման, ամրապնդման տարիներ:
- Ինքնապաշտպանութիւն Սելեւկեաններէն եւ պարսիկներէն:
- Փոքր Հայքի մէջ կը շարունակուի թագաւորութիւնը:
- Փոքր Հայքի Միհրդատը՝ դաշնակից Պոնտոսի Փառնաս Ա.-ին:

105 Ք. ա.

- Արտաւազդ պատանդ կու տայ իր որդի Տիգրանը պարսիկներուն:

Գ. ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

95 – 56 Ք. ա. - Տիգրան Բ.:

- Տիգրանի վերադարձը, թագադրութիւն, ամուսնութիւն Պոնտոսի Միհրդատ թագաւորի աղջկան հետ:
- Վերանուաճում ազգային հողերու, ընդլայնում, Փոքր եւ Մեծ Հայքերու միացում:
- Հայաստանը՝ Կասպից ծովէն մինչեւ Միջերկրական, Պոնտոսէն Պաղեստին, ներառեալ՝ Պարսկաստան, Վրաստան, Ադուանիստան, Սուրիա, Կիլիկիա, Հիւսիսային Միջագետք եւ Պաղեստին:
- Տիգրանակերտը՝ նոր մայրաքաղաք: Առասպելական հարստութիւններ: Յոյներու եւ հրեաներու ներածում:
- Արուեստասէր եւ մշակութասէր միապետ մը կը հանդիսանայ:
- Աւատապետական ազնուականութիւն, պաշտօնէութիւն եւ գիւղացիութիւն: Նաեւ քաղքենի դասակարգ մը՝ մեծամասնութեամբ օտար:
- Զինուորական հսկայ ուժ՝ հեծելազօրք (թեթեւազէն). ձիաբուծութիւն եւ զինուորական ճարտարապետութիւն:

70 Ք. ա.

- Փառքի գազաթնակէտը:



Գեղանկարը՝ Ռազմիկ Պերթիգեանի

Ա. դար Բ. ա.

- Հռոմ եւ Պոնտոս կը բախին իրարու: Պոնտոսի Միհրդատը՝ ախոյեան հելէն դատի. կը գրաւէ Փոքր Ասիան եւ Աթենքը: Հռոմայեցի Սիլլա կը կասեցնէ զայն. Լուկուլլոս պարտութեան կը մատնէ: Միհրդատ կ'ապաստանի Տիգրանի քով:

69 Բ. ա.

- Տիգրան կը մերժէ զայն յանձնել: Լուկուլլոս պատերազմ կը յայտարարէ, կը պաշարէ Տիգրանակերտը 15 – 20 000 զինուորներով ընդդէմ Տիգրանի 40 000-ին:
- «Եթէ կու գան իբրեւ բանակ կռուելու՝ բաւարար չեն, եթէ կու գան իբրեւ պատգամաւոր հաշտութիւն խնդրելու՝ շատ շատ են»:
- Բայց անպատրաստ՝ կը պարտուի: Պարծեալ չի յանձներ Միհրդատը, կռիւը կը շարունակէ:

69-68-ի ծմեռը

- Մեծ պատրաստութիւններ՝ 50 000 հետեւակ, 20 000 ծիւոր, Միհրդատ խորհրդական: Կը հրահրուի հայոց հայրենասիրութիւնը: Լուկուլլոս կը պարտուի:

67-66 Բ. ա.

- Պոմպէոս կ'արշաւէ 50 000 զօրքով: Կը յաղթէ Պոնտոսի, պարսիկները կը դրդէ հայոց դէմ: Տիգրանի որդին կը դաւաճանէ հօր: Տիգրան կը յաղթէ պարսիկներուն, կը մերժէ դարձեալ ապաստան տալ Միհրդատին, Պոմպէոսէն հաշտութիւն կը խնդրէ:
- Վերջ հայկական կայսրութեան. Հայաստան՝ հարկատու Հռոմի, բայց աւելի ընդարձակ քան առաջ:

56 Բ. ա.

- 40 տարի իշխելէ ետք կը մեռնի հայոց արքայից արքայ Մեծն Տիգրանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ (Ք.Ա. 93-66)
THE ARMENIAN EMPIRE (93-66 B.C.)



Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՀՈՈՄԻ ԵՒ ՊԱՐԹԵՒՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

56 – 34 ք. ա. - Արտաւազդ Պ.:

- Թատերագիր թագաւորը:

56 ք. ա.

- Հռոմայեցի Կրասոսի յարձակումը պարթեւներուն (պարսից) վրայ: Անտեսում Արտաւազդի իմաստուն խորհուրդներուն: Պարտութիւն: Վնասը՝ Հայաստանի:
- Արտաւազդի եւ պարթեւներուն միջեւ դաշինք:

36 ք. ա.

- Յուլիոս Կեսար 100 000-ի բանակով Մարկոս Անտոնիոսը կ'ուղարկէ պարսից վրայ: Հայաստան Անտոնիոսի կուտայ 60 000 ծիւոր եւ 10 000 հետեւակ: Անտոնիոս կ'աճապարէ եւ կը պարտուի: Արտաւազդ՝ քաւութեան նոխազ: Դաւադրաբար կը ծերբակալուի եւ Եգիպտոս, Կղէոպատրային նուէր կը բերուի, կը բանտարկուի հոն, ապա կը սպանուի ընտանիքին հետ: Կը կողոպտուին հարստութիւնները:
- Ատկէ ետք հայերը կը մօտենան պարթեւներուն, որոնք Հայաստան պատուար մը կը նկատեն Հռոմի դէմ:

34 – 31 ք. ա. - Աղեքսանդր:

- Կ'իշխէ Աղեքսանդր՝ Անտոնիոսի եւ Կղէոպատրայի գաւակը:

30 – 20 ք. ա. - Արտաշէս Բ.:

- Արտաշէս՝ որդին Արտաւազդի, գահ կը բարձրանայ ժողովրդական ապստամբութեամբ, որ դուրս կը վտարէ Աղեքսանդրը: Սա կը վերադառնայ հռոմէական ուժերով, եւ ի վերջոյ Արտաշէս պարթեւներու օգնութեամբ կը տիրանայ իր գահին:
 - Ոչնչացում Հայաստանի բոլոր հռոմէացիներուն:
 - Արտաշէս կը սպանուի Օգտաւիանոսի կողմէ:

20 – 12 ք. ա. - Տիգրան Պ.:

- Տիգրան՝ դաստիարակուած Հռոմի մէջ:

- Հայաստան ինքնավար, բայց Հռոմի դաշնակից եւ անոր գերիշխանութեան ներքեւ:

12- 1 ք. ա. - Տիգրան Դ.

- Ներքին հակամարտութիւններ՝ երբոր Տիգրան գլուխ կը ծռէ Հռոմի առջեւ:

1- 53 ք. ե.

- Հռոմէն պարտադրուած թագաւորներ:
- Խռովութիւններ, ընդվզում: Հռոմի ներկայացուցիչները կը վտարուին: Հայաստան կը դիմէ պարթեւներուն:

53 – 429 - ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐԱՏՈՒԹԻՒՆ³

53 – 100 - Տրդատ Ա.:

- Տրդատ՝ պարթեւ թագաւորի եղբայրը, սիրուած արքայ մը:

58

- Հռոմէացի Կորբուդոն 30 000-ով կը յարձակի: Չորս տարի հայերը յաղթական: Վրաստան հիւսիսէն կը հարուածէ:

59

- Պարտութիւն. Արտաշատը կ'այրուի:
- Հայ-պարթեւ դաշնակցութեամբ Հռոմ ետ կը քշուի:

62

- Հռոմ աւելի մեծ բանակով դարձեալ կը յարձակի եւ կը պարտուի: Ներոն- Տրդատ հաշտութիւն: Հրանդէայի դաշնագիրը. 66-ին Հռոմ կը ճանչնայ Տրդատը իբր թագաւոր, Հայաստան՝ Հռոմի գերիշխանութիւնը: Ներոն թագ կու տայ եւ իր ծախսով կը վերաշինէ Արտաշատը:

100 – 113 - Աշիտարէս:

113 – 114 - Պարթամիսիրիս:

116 – 117 - Պարթամասպատէս:

117 – 140 - Վաղարշ Ա.:

140 – 178 - Սոյեմոս:

³ Ուրիշներ 66 թուականը կը նկատեն Արշակունեաց հարստութեան սկիզբը, երբ Տրդատ Թագ կը ստանայ Հռոմէն:

ARSHAKUNI KINGDOM (66-428)



178 – 216 - Սամատրուկէս:

216 – 217 - Վաղարշ Բ.:

217 – 238 - Տրդատ Բ.:

- Հռոմէացիք եւ պարթեւները փոխն ի փոխ կը փորձեն տիրանալ Հայաստանի: Արտաշատը դարձեալ կը քանդուի, կը շինուի Վաղարշապատը (Էջմիածին):

198

- Տիգրան կը պարտուի: Հռոմ կը ճանչնայ Հայաստանի անկախութիւնը:
- Կարակալլա կայսր կը ծերբակալէ Վաղարշ Բ. եւ իր թագուիին:
- Հայերը կը կռուին: Կայսրը կը սպանուի իր իսկ զինուորներուն կողմէ:

224

- Սասանեանները կը գրաւեն պարսից գահը, կը տապալեն պարթեւ Արշակունիները, որոնց հայկական թելը երկու դար եւս պիտի տելէ:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

235 – 270

- Հռոմէական կայսրութիւնը կազմալոյծ եւ անիշխանութեան մէջ:

ԶԻՆՈՐԴԱՄՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՈՅԹՆԵՐ

- Անցնող չորս դարերուն՝ լաւ կազմակերպուած պետական մեքենայ:
- Լաւ բանակ՝ յաճախ հռոմէական բանակին մէջ գտնուելով մարզուած զինուորներով: Պոմպէոսի իշխանութեան տիրանալու կռիւներուն՝ հայկական զօրամաս մը մասնակից:
- Հայաստան՝ առեւտրական կապ հիւսիսի եւ հարաւի, արեւելքի եւ արեւմուտքի միջեւ:
- Հողի տէրը թագաւորը, ազնուականութիւնը եւ կղերը:

- Գիւղացին ստրուկ: Բայց հրահանգուած է քաղաքացիին՝
չարհամարիել գիւղացին, եւ գիւղացիին՝ յարգել
քաղաքացին:
- Կէս-վաչկատուն, խաշնարած լեռնականները աւելի
ազատ:
 - Հռոմի եւ Յունաստանի աստուածները՝ Հայաստան:
 - Հայաստանի հովանաւոր, մայր իմաստութեանց՝
Անահիտ. Սիրոյ եւ գեղեցկութեան աստուած՝ Աստղիկ,
քաջութեան՝ Վահագն, հայր՝ Արամազդ: Աշխատասէր,
մտացի, բարի աստուածներ՝ հայուն պէս: Կեդրոն՝
Աշտիշատ, Տարօն:
 - Հայաստան՝ գտնուելով իրարու հակառակորդ երկու
հզօրներու միջեւ՝ կրցաւ պահել իր անկախութիւնը
հակառակ բազմաթիւ պատերազմներուն:

Ե. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ

ՈՐՂԵԳՐՈՒՄԸ

224

- Իշխանութեան գլուխ գալով Սասանեանները կը
հանդիսանան աւելի ազգայնական, մոլի մագդէական եւ
կողմնակից՝ կեդրոնական իշխանութեան:

228

- Յարձակում տիրանալու համար Հայաստանի եւ Փոքր
Ասիոյ, վտարելու հռոմէացին: Ետ կը մղուին:

230

- Հռոմ կը յարձակի Հայաստանի վրայ:
- Խոսրով Ա. (= Տրդատ Բ.) կը դիմադրէ 30 տարի: Կը
սպանուի դաւադրաբար:
- Պատերազմը կը շարունակուի:

287 – 330 - Տրդատ Գ.:

- Խոսրովի որդին, հրաշքով ազատած, Հռոմի մէջ
մեծնալով աչքի կը զարնէ իր քաջութեամբ:
- Օգտուելով Սասանեաններու տկար մէկ պահէն, կը մտնէ
Հայաստան:



Գեղանկարները՝
Ռազմիկ Պերթիգեանի



297

- Հռոմի Դիոկղետիանոս կայսեր հետ կը յաղթէ պարսից:

288 – 301

- Ա. դարէն իսկ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալներուն կողմէ Հայաստան մտած եւ որոշ ժողովրդական ընդդիմութենէ ետք տարածուած քրիստոնէութիւնը կը դառնայ աշխարհի առաջին պետական կրօնքը հայոց մօտ: (Հռոմ՝ 313-ին):
- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:
- Մեհեանները կը քանդուին: Աշտիշատի մէջ առաջին եկեղեցին:
- Էջմիածնի հիմնադրութիւնը:
- Վրացիք եւ աղուաններն ալ կը քրիստոնէանան Լուսաւորիչի ձեռքով:

330 – 339 - Խոսրով Բ.:

- Պատերազմ ընդդէմ վրաց եւ աղուանից: Վաչէ Մամիկոնեան եւ Վահան Ամատունի երկիրը կը փրկեն:

340 – 351 - Տիրան:

- Կը գերեվարուի Սասանեան Շապուհի կողմէ: Ազնուականութիւնը Հռոմի օգնութեամբ կ'ազատէ Տիրանը, որ կուրացած է: Տեղը կը զիջի որդւոյն:

351 – 367 - Արշակ Բ.

- Հաշտութիւն նոր Հռոմի՝ Բիզանդիոնի եւ պարսից միջեւ:
- Արշակաւան, կեդրոնացած իշխանութիւն:
- Հայաստան չորս տարի մինակը կը դիմադրէ Շապուհին՝ Վասակ Մամիկոնեանի սպարապետութեամբ:
- Արշակ եւ Վասակ դաւադրաբար կը ձերբակալուին: Անյուշ բերդին մէջ կ'արգելափակուին: (Արշակ ուժ կ'առնէր Շապուհին առջեւ՝ երբ հայրենի հողի վրայ կը կանգնէր):
- Փառանձեմ թագուհի Արտագերս բերդի մէջ 14 ամիս կը դիմադրէ:
- Մուշեղ Մամիկոնեան կը յաղթէ Շապուհին Բագրեւանդի մէջ, կանանոցը իրեն կը վերադարձուի:

369 – 374 - Պապ:

- Կը փակէ մեծ թիւով վանքեր, կը գրաւէ եկեղեցւոյ կալուածներուն մեծ մասը:
- Կ'ազգայնացնէ եկեղեցին, կը հանդարտեցնէ աւատապետերը:

- Դաւադրաբար կը սպանուի Բիւզանդիոնի կողմէ:

374 – 378 - Վարազդատ:

- Կը սպանէ Մուշեղ Մամիկոնեանը, ինքն ալ երկրէն կը վտարուի Մանուէլ Մամիկոնեանի կողմէ:

378 – 380 - Վաղարշակ:

- Ներքին պառակտումներ:

386 – 392 - Խոսրով Գ.:

- Ներքին պառակտումներ:⁴

392 – 414 - Վրամշապուհ:

- Կրկին վերելքի շրջան:

404

- Գրոց գիւտը: ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵՒ ՍԱՀԱԿ ՀԱՅՐԱՊԵՏ:

416 – 420 - Սափոր:

- Ապիկար մը:

423 – 429 - Արտաշէս:

- Ապիկար մը եւս:
- Անհամաձայնութիւն աւատապետերու միջեւ: Իրենց հրաւերով՝ Սասանեանները կը տիրանան երկրին:

ԳԻՆՈՒՐԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

- Արտաքին ճակատ. Հռոմը՝ տկարացած, Սասանեանները՝ զօրացած:
- Ներքին ճակատ. աւատապետերը անմիաբան եւ փառասէր: Պայքար պալատին եւ եկեղեցիին միջեւ: Տոհմական շահը՝ վեր ազգային շահէն: Ամենէն յօժարը՝ արեան տուրքն է, որ կու տան գահին, որուն տիրակալը ընդունիլը կամ մերժելը իրենց ձեռքն է: Այս պատճառաւ թագաւորութեան կործանումէն ետք հայկական նահանգները կը յաջողին պահել իրենց ինքնավարութիւնը եւ ապստամբիլ օտար իշխողներուն դէմ:
- Եկեղեցին՝ պատսպարան հայուն: Կրօնքը ազդակ զարգացումի եւ ինքնապահպանման: «Աստուած,

⁴387 թուականին Պարսկաստանի ու Բիւզանդիոնի միջև ստորագրուած Ակիլիսենէի դաշնագրով Հայաստան կը բաժնուի երկու մասի:

ընտանիք, հայրենիք»:

- Կաթողիկոսներ Ներսէս Ա. (353- 373), Սահակ Ա. (387- 438):
- Մշակութային վերելք: Ոսկեդար գրի եւ գրականութեան: Հին հայկական դիցազներգութիւններէն եւ գուսաներգութիւններէն պատառիկներ կը փրկուին (Գողթան երգեր, Վահագնի ծնունդը):
- Մեկնիչներ եւ թարգմանիչներ արտասահման կ'երթան ուսանելու:
- ԹԱԳՈՒՀԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ՝ Աստուածաշունչը, Մեսրոպի եւ աշակերտներուն կողմէ, երկու անգամ հայերէնի կը թարգմանուի:
- «Հայոց պատմութիւն» - Ագաթանգեղոս, Փարպեցի, Խորենացի:
- Կորիւն («Վարք Մաշտոցի»), Եզնիկ («Եղծ աղանդոց»), Եղիշէ «Վարդանանց եւ Հայոց պատերազմը»):
- Ոչ միայն մեր, այլեւ Մերձաւոր Արեւելքի պատմութիւնը կը գրուի:
- Դպրոցներ եւ վանքեր: Ազգային նկարագիր:
- Դ. դարուն Վուլֆիլա հայ եպիսկոպոսը կը գտնէ կոթական տառերը եւ կոթերէնի կը թարգմանէ Աստուածաշունչը:
- Քարոզիչներ, առեւտրականներ, վարպետներ Եւրոպա կը մեկնին:
- Երեք հայ վարդապետներ Իսլանտա կը հասցնեն Քրիստոնէութիւնը:
- Ճարտարապետութեան զարգացում, եկեղեցիներ:

430 – 634 - Կիսանկախ Հայաստան՝ պարսից իշխանութեան ներքեւ

- Քրիստոնէութեան պաշտպանութեան շրջան:
- Հայ իշխանները առանձնաշնորհումներ կը վայելեն: Սատրապներ հայեր են (Սիւնիք):
- Յազկերտ Բ. կրօնափոխութիւն կը պահանջէ:

Գ. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

450

- Աշտիշատի ժողով. միասնաբար հաւատարմութիւն՝ Սուրբ հաւատքին հանդէպ:
- Մոգերու ջարդ Անգղ գիւղին մէջ՝ Ղեւոնդ Երէցի առաջնորդութեամբ :

451

- ԱԲԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ:
- 60 000 հայեր ընդդէմ 200 000 պարսիկներու: Վարդան Մամիկոնեան սպարապետը, 8 զօրավարներ եւ 1036 զինուորներ կը նահատակուին:
- Թշնամին եռապատիկ զոհ կու տայ: Յազկերտ կը հրաժարի իր պահանջէն:
- Պեռոգի օրով կը վերսկսին կռիւները: Վահան Մամիկոնեան հայդուկային խումբերով եւ վրաց օգնութեամբ կը յաղթանակէ չորս ճակատամարտներով:

484

- Նուարսակի դաշնագիրը. Վաղարշ արքան կ'ընդունի խղճի ազատութեան եւ ինքնավարութեան մեր պայմանները:

491

- Հայ եկեղեցին, որ կ'ընդունի 431-ի Եփեսոսի ժողովի միաբնակութեան սկզբունքը եւ կը մերժէ 451-ի Քաղկեդոնի երկաբնակութիւնը, կը բաժնուի Բիւզանդիոնէն:
- Հռոմ՝ սին եւ աթոռամով վէճերէ, սերտօրէն կապուած՝ Երուսաղէմի, ուր Ե. դարէն ի վեր հայկական վանքեր կան:
- Հռոմ եւ Բիւզանդիոն դժգոհ են ասկէ, Իրան ՝գոհ:
- Հայը կ'ապրի եկեղեցւոյ շնորհիւ:
- Պաւլոսեանները, բողոքականութեան նախակարապետները:



Գեղանկարը՝ Ռազմիկ Պերթիզեանի

Ձ. եւ Է. դարեր

- Տեւական բախումներ Իրանի եւ Բիւզանդիոնի միջեւ ի վնաս Հայաստանի: Մորիկ Հայկազն, Բիւզանդիոնի հայազգի կայսրը, կը փորձէ քանդել Հայաստանը:⁵
- Արիւթին, յարատեւութիւն եւ գոյատեւում:

654 – 859 - Հայաստան՝ արաբական տիրապետութեան տակ⁶

Է. դար

- Իսլամութեան ծնունդը եւ արաբական կայսրութեան հիմնադրութիւնը:
- Ամենէն լուրջ դիմադրութիւնը՝ հայոց կողմէ:

640 – 642 - Թէոդորոս Ռշտունի:

- Զօրավար դիմադրութեանց:

645

- Իրան կը յանձնուի արաբներուն, Հայաստանի դէմ յարձակումները կը սաստկանան: Հայոց լեռները՝ անարիկ: Բիւզանդիոն՝ կրաւորական դիրքի մէջ:
- Հաշտութեան դաշինք՝ ինքնավարութեան, կրօնական ազատութեան եւ արաբական գերիշխանութեան ճանաչումի պայմաններով: Թէոդորոս՝ կառավարիչ:
- Տուրքեր եւ 15 000 հեծելազօրք:
- Արաբը կը ստրկացնէ Արաքսի եւ Եփրատի հովիտներու ժողովուրդը ոստիկաններու հաստատուած վայրերու մէջ: Կը ձախողի ընկճել ազնուականները:
- Իսլամացման բոլոր փորձերը անյաջող: Ծանր տուրքեր:
- Կառավարիչները յաճախ հայեր՝ Մամիկոնեան, Բագրատունի, Արծրունի:
- Արաբներուն համար՝ Հայաստան պատուար ընդդէմ Կովկասի եւ Բիւզանդիոնի:
- Բազմաթիւ ապստամբութիւններ:

697 – 705 - Սմբատ Բագրատունի:

- 8000 արաբ զինուոր կը ջարդէ Վարդանակերտի մէջ:

766 – 778 - Մուշեղ Մամիկոնեան:

- 5000 հոգիով կը դիմադրէ 40 000-նոց բանակի մը, Բագաւանի մէջ, Կ'իյնայ կռուի ընթացքին:

⁵ 591-ին ան կը յաղթէ պարսիկներուն և աւելի մեծ տարածք մը կը գրաւէ Հայաստանէն ու 10 000 հայեր կը փոխադրէ իր Լրոպական հողերուն վրայ:

⁶ Ուրիշներ արաբական տիրապետութեան շրջանը կը համարեն 640 – 885:

- Մրուան, Հոլ եւ այլ ոստիկաններու օրով Հայաստան շունչ կը քաշէ:
- Արաքները ի վերջոյ կը յաջողին քանդել հայ նախարարներու միասնականութիւնը:
- Բիւզանդիոն կը փորձէ երբեմն գրաւել Հայաստանի սա կամ նա մասը: Հայերուն նպաստաւոր է տեւական ներկայութիւնը Բիւզանդիոնի, որ սակայն չի կրնար իսկական օգնութիւն մը ընծայել: Իրեն համար ալ Հայաստան պատուար մըն է:
- Հայաստան շատ կը վնասուի արաբ եւ բիւզանդական կռիւներէն, բայց կը յաջողի պահել իր տեսակ մը ինքնավարութիւնը:

ՁԻՆՈՒՐԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

- Հայ բանակները կը պահեն իրենց քաջութեան եւ արժէքի համբաւը: Աւատական բանակին մաս կազմողն է, որ կրնայ իրաւատէր ըլլալ: Իւրաքանչիւր պարոն կամ նախարար ունի իր բանակը (ոչ աւելի քան 5000): Աւատական բանակներու ամբողջութիւնը կը հասնի 15 000-ի, ի պահանջել հարկին՝ առաւել 25 000, հաւաքուած գիւղացիներէն եւ քաղաքացիներէն:
- Հայ զինուորը լաւ զինուած, լաւ վարժուած, լաւ մարզիկ, լաւ մագլցող, հուժկու եւ ուժեղ:
- Հայ բանակները ոչ միայն կը պաշտպանեն մեր երկիրը, այլեւ կը ծառայեն Սասանեաններուն (թուրանական եւ կովկասեան ցեղերու դէմ), Բիւզանդիոնի (պարսից եւ արաքներուն դէմ), եւ արաքներուն (քիւրտներուն եւ ղազախներուն դէմ):
- Զինուորական յառաջացած ճարտարապետութիւն՝ ամրոցներ դղեակներ: Մամիկոնեաններու Ողական ամրոցը Մուշի մէջ:
- Ընկերային կառոյցը՝ անփոփոխ: Կղեր, ազնուականութիւն (փոքր ազնուականներ, նախարարներ, իշխաններ) եւ ճորտութիւն: Իշխանները առաւելաբար քաղաքներու մէջ կ'իշխեն: Տուրքերու ծանրութեան տակ փոքր նախարարութիւնները կը միանան մեծերու:

- Մտքի եւ արուեստի բեղուն գործունէութիւն հակառակ տիրող պայմաններուն:

Է. դար

- Սէբէոս (Հերակլ կայսեր պատերազմներու պատմութիւնը):
- Կոմիտաս կաթողիկոս («Անձինք նուիրեալք» կրօնական բանաստեղծութիւն):
- Յովհան Մամիկոնեան (դաւանաբանական հարցեր):
- Անանիա Շիրակացի (թուաբանագէտ, գիտնական եւ բանաստեղծ):

Ը. դար

- Մովսէս Կաղանկատուացի («Աղուանից պատմութիւն»):
- Ղեւոնդ (արաբական պատերազմներու պատմութիւնը):
- Յովհաննէս կաթողիկոս (եկեղեցական կանոններ եւ կանոնագրական նամակներ): Լաւ յարաբերութիւններ կը մշակէ արաբ խալիֆաներուն հետ եւ Հայաստանի համար առանձնաշնորհումներ ձեռք կը ձգէ:
- Սասունցի Դաւիթի դիցազնավէպը:
- Արաբական աղղեցութիւնը կ'ըլլայ օգտակար, հող կը պատրաստէ Բագրատունեաց ոսկեդարուն:
- Արեւմտեան եւ արեւելեան մշակոյթները զիրար կը լրացնեն Հայաստանի մէջ:
- ԺԱ. դարուն Եւրոպայի մէջ ռոման ճարտարապետութեան երեւումը՝ շնորհիւ Հայաստանի վաղ քրիստոնէական սքանչելի ճարտարապետութեան:
- Գմբէթը, Իրանէն ներածուած, կը զարգանայ եւ կ'արտածուի Պոլիս, Յունաստան, Պալքանները, Իտալիա, Ֆրանսա, Գերմանիա: Սուրբ Սոփիան գործն է հայ վարպետներուն: Հետագային նախատիպ կը ծառայէ Սուրբ Պետրոսին Հռոմի մէջ:
- Քարի վարպետներ:
- Էջմիածին (Ե. դար), Աշտարակի, Աւանի, Եղիվարդի եկեղեցիները (Զ. դար), Դուինի Սուրբ Գրիգոր, Վաղարշապատի Սուրբ Հռիփսիմէ եւ Սուրբ Գայանէ եկեղեցիները, Անիի Մայր տաճարը, Մծխեթի, Բագարանի, Ալումանի եկեղեցիները, Զուարթնոցը, Թալիշի եւ Թալինի եկեղեցիները (Է. դար):
- Ներսէս Գ. կաթողիկոս՝ «Շինող»:



Գեղանկարը՝ Ռազմիկ Պերթիզեանի

Է. ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

- Երկրին զանազան կողմերը ունեցած ստացուածքները ընդարձակելով եւ իւրացնելով փոքր իշխանութիւնները՝ Բագրատունիները հետզհետէ կը զօրանան:
- Արաբներուն հետ թշնամութիւն կամ բարեկամութիւն՝ համաձայն օրուան պահանջին:
- Արաբներուն հետ կ' ընկճեն Ազրայէժանի էմիրները:
- Հայաստան կամաց կամաց իրական պետութեան մը կերպարանքը կ'առնէ:
- Տոհմական զգացումը տեղի կու տայ ազգային զգացումին:
- Բագրատունեանց գործելու ճարպիկութեան եւ համբերատար յարատեւութեան, ինչպէս նաեւ սրբակրօն եւ զարգացած եկեղեցականներու եւ կաթողիկոսներու աշխատանքին շնորհիւ Հայաստան կը դիմէ անկախութեան:

850

- Անկախութեան ծախսորդ փորձ մը Սմբատ Բագրատունիի կողմէ:
- Արաբները կը գիտակցին թէ վերջնապէս չեն կրնար ընկճել Հայաստանը, որ իրենց համար պատուար մը է Կովկասի դէմ, եւ զոր չեն ուզեր տեսնել որպէս դաշնակից Բիւզանդիոնի:

862

- Աշոտ Բագրատունի կը ստանայ իշխանաց իշխան տիտղոսը:
- Հայաստան՝ ինքնավար:
- Դրացի իսլամ էմիրներ 80 000 զօրքով կը յարձակին, կը պարտուին Արաքսի ափերուն, Աշոտի 40 000-նոց բանակին կողմէ:
- Խնամիական կապեր Սիւնեաց եւ Արծրունեաց հետ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԵՐՈՒ ԹԱԳԱՌՈՒԹԻՒՆ - ԱՌԱՋԻՆ ԵՐՁԱՆ (885-953)
 BAGRATUNI KINGDOM - EARLY PERIOD (885-953)



885 – 1045 - Բագրատունեաց Հարստութիւն

885

- Բիւզանդիոն կը վերականգնի, Պաղտատ արքայական թագ կ'ուղարկէ Աշոտի, նոյնը կ'ընէ Վասիլ Ա.՝ Բիւզանդիոնէն:

885 – 891 - Աշոտ Ա.:

- Ծաղկում, նոր աւաններ, երկրագործութիւն, առեւտուր:
- Քաղաքական եւ առեւտրական դաշինք՝ Վասիլ Ա.-ի հետ, որուն օգնելու համար պուլկարներուն դէմ զօրագունդ մը կը դրկէ:

892 – 914 - Սմբատ Ա.:

- Երկու անգամ ետ կը մղէ Ագրաթեյճանի ոստիկանը եւ կը գրաւէ Դուինը:
- Միջագետքի եւ Ագրաթեյճանի էմիրները, Վասպուրականի Արծրունի իշխաններու մեղսակցութեամբ կը սպաննեն Սմբատը:

908

- Առ ի վարձատրութիւն Արծրունիք թագ կը ստանան:

915 – 928 - Աշոտ Բ. (Երկաթ):

- Անկախութեան վերականգնում հայդուկային կռիւներով:
- Արաբ-թուրք-քիւրտ բանակ մը պարտութեան կը մատնուի Գէորգ Մարգպետունի սպարապետին կողմէ:
- Այս յաղթանակները ճամբայ կը բանան Բիւզանդիոնի նուաճումներուն եւ դէպի Միջագետք ծաւալումին:
- Յաջորդ երեք արքաներու օրով՝ Բագրատունեաց ոսկեդարը:

928 – 951 - Աբաս Ա.:

- Խաղաղութեան դաշինք Ագրաթեյճանի ոստիկաններուն հետ:
- Շինարարութիւն, եկեղեցիներ: Կարսի վերակառուցում:
- Աբխազներու թագաւորին կողմէ յարձակում եւ պարտութիւն:

952 – 972 - Աշոտ Գ. (Ողորմած):

- 90 000-նոց բանակ:
- Պարտութեան կը մատնէ Ագրաթեյճանի եւ Միջագետքի տիրացած յափշտակիչ մը: Բարեկամութիւն՝ խալիֆային հետ:
- Չէզոքութիւն, երբ Յովհաննէս Չմշկիկ կայսրը կը պատերազմի արաբներուն դէմ:

- Կառուցանող:
- Անին՝ մայրաքաղաք, միջնաբերդ: Սանահինի եւ Հաղբատի վանքերը:
- Կարսի (Վանանդի) թագաւորութիւն եղբօր կողմէ:

972 – 989 - Սմբատ Բ.:

- Անին՝ կրկնակ պարիսպով:
- Անիի մայր տաճարը՝ Տրդատի ճարտարապետութեամբ :

990 – 1020 - Գագիկ Ա.:

- Բարգաւաճման, ուժի, մշակոյթի գագաթնակէտ:
- Եկեղեցիներու շինութիւն, բարեսիրական հաստատութիւններ:
- Անին՝ քառասուն դուռ, 1001 եկեղեցի:
Կաթողիկոսանիստ: Քաղաքակրթութեան ամրոց արեւմուտքի համար, Ասիոյ դիմաց:

1020 – 1042 - Սմբատ Գ.

- Տկար:
- Եղբայրը՝ Աշոտ, կը հիմնէ Լոռիի թագաւորութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ժ. դար

- Թուրանական ցեղեր կ'երեւին արեւելքէն եւ մահացու հարուած կը հասցնեն հայկական, իրանական, արաբական, բիւզանդական եւ պալքանեան քաղաքակրթութեանց:

ԺԱ. դար

- Սելճուքեան թուրքերու արշաւանքները:
- Բագրատունիները տարիներով, առանձին՝ առանց Բիւզանդիոնի օգնութեան կը դիմադրեն: Առաջինը տեղի կու տայ Վասպուրականի թագաւորը եւ իր երկիրը կը յանձնէ եւ ինք իր 40 000 ժողովուրդով կ'երթայ հաստատուիլ Բիւզանդական Սեբաստիոյ եւ Արաբկիրի մէջ:

1021

- Սելճուքներուն ծանր հարուածներ տալով Անիին պարիսպներուն տակ կը զոհուի Վասակ Պաիլաւունի:

- Օգտուելով թագաւորին տկարութենէն Բիւզանդիոն ինքն ալ կը յարծակի, կը փորձէ գրաւել Հայաստանը, անոր կառավարիչ կը նշանակէ իր գործակալը Վեստ Սարգիս Սիւնին:
- Աղուանից թագաւորին մեղսակցութեամբ Հայաստան կը գրաւուի երեք յարծակումներէ ետք:
- Անիի պարիսպներուն տակ Վահրամ Պահլաւունի զօրավարը կը յաղթէ յոյներուն խլելով անոնցմէ 20 000 զօրք:

1042 – 1045 - Գագիկ Բ.:

- Վեստ Սարգիսէն ետ կ'առնէ Անիի միջնաբերդը:
- Գագիկ, Վահրամ եւ ժողովուրդը արի դիմադրութիւն ցոյց կու տան սելճուքներուն:
- Առիծ Խաչիկ Վասպուրականէն դուրս կը վտարէ սելճուքները:
- Յարծակում եւ պարտութիւն Բիւզանդիոնի Մոնոմախոս կայսրին կողմէ:
- Վեստ Սարգիսի դաւադրութեամբ Գագիկ Բ. Պոլիս կ'երթայ եւ ծուղակը կ'իյնայ:

1045

- Վերջ Հայաստանի անկախութեան: Ինը դար գերութիւն: Պետրոս կաթողիկոս երկիրը Բիւզանդիոնի կը յանձնէ:
- Կեղեքում, ոճիր, թալան, կրօնական հալածանք:
- Կարսի թագաւորութիւնը տասնեակ մը տարիներ, Լոռիինը դար մը եւս կը տեսնէ:

1048

- Սելճուքներու յարծակումը Տուղրիլի առաջնորդութեամբ: Բիւզանդիոն չի կրնար պաշտպանել Հայաստանը: Ինքնապաշտպանութիւն Անիի եւ Մանազկերտի մէջ:
- 1054 - Դարծեալ սելճուքներու դէմ արի դիմադրութիւն՝ գլխաւորութեամբ Թաթուլի, որ գերի կ'իյնայ «Եթէ հարուածը իմս է...»
- 1064 - Անին կ'իյնայ Ալփ Ասլանի ձեռքը: Կողոպուտ, կործանում, ջարդ:
- Բիւզանդիոն կը զրկուի իր վահանէն: Թուրքերու առջեւ բաց է արեւմուտքի ճամբան:

ԶԻՆՈՐԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՈՅԹՆԵՐ

- Երկրին ուժը՝ զինեալ ժողովուրդը, սպարապետը՝ թագաւորը կամ եղբայրը:
- Աւան, եկեղեցի, վանք թէ տուն՝ պարսպապատ: Միջնաբերդներ: Վասպուրական 70 ամրոց ունի:
- Տնտեսական փայլուն զարգացում:
- Խնամքով մշակուած, գիտականօրէն ոռոգուած հողեր: Առատ բերք՝ ցորեն, գինի, միրգեր, պտուղներ:
- Ծանր տուրքերէն ազատելով քաղաքները ճարտարարուեստի եւ արհեստագիտութեան բացառիկ զարգացում կ'ունենան: Հիւսուածեղէն, ներկեր, մետաղներ (պղինձ), գէնքեր, կաշեգործութիւն, ոսկերչութիւն, Շինարարութիւններ (կղմինտր):
- Արմտիք, աղ, գինի, փայտ, արջառ, ծի, մուշտակ, մեղր կ'արտածուին Բիւզանդիոն եւ Պաղտատ:
- Հայաստան՝ փոխանակութեանց կեդրոն Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ:
- Հողը՝ թագաւորին եւ եկեղեցիին:
- Հինգ դասակարգ՝ նախարարներ, ազատանի, կղեր, քաղքենի եւ գիւղացի:
- Մեծ զարկ կը տրուի պատմագրութեան եւ գրականութեան:

Ժ. դար

- Յովհաննէս Զ. կաթողիկոս (պատմութիւն):
- Թովմաս Արծրունի (պատմութիւն):
- Մեսրոպ Երէց (Ներսէս Ա.-ի պատմութիւնը):
- Գրիգոր Նարեկացի («Մատենան ողբերգութեան»):

ԺԱ. դար

- Ստեփանոս Ասողիկ (հայոց պատմութիւն):
- Ուխտանէս (հայոց պատմութիւն):
- Գրիգոր Մագիստրոս (լեզուական, պատմական եւ այլ հարցեր):
- Արիստակէս Լաստիվերտացի (Բագրատունեաց վերջին շրջանի պատմութիւնը):

ԺԲ. դար

- Մխիթար Գոշ (Ղատաստանագիրք – Հայկական իրաւունքը, պետական իրաւունքը):
- Ճարտարապետական ծաղկում. թագաւորները «կառուցող». Անիի Մայր Տաճարը եւ Ս. Սոփիայի նորոգութիւնը Տրդատ Ճարտարապետի կողմէ, Ս. Գրիգոր, Ս. Առաքելոց եկեղեցիներ, Ս. Գրիգոր եւ Հովիւի մատուռները, Ս. Փրկիչ եւ այլն Անիի մէջ: Աղթամարի, Մարմաշէնի, Արկինայի, Խոջավանքի Ս. Յովհաննէս, Դարաչիչէքի Ս. Գրիգոր, Կարսի Առաքելոց եկեղեցիները եւ այլն: Նաեւ Վրաստանի մէջ:
- Կատարեալ ներդաշնակութիւն արուեստներուն եւ ժողովուրդի ոգիին միջեւ:
- Յատակագիծերու եւ ձեւերու այլազանութիւն: Միջին ծաւալով՝ զանգուածային տպաւորութիւն ներսէն: Լոյսի եւ ստուերի իրերայաջորդում: Ձեւերու մաքրութիւն, կարգաւորութեան կանոնաւոր եւ կորովի նկարագիր, ուժ, խստամբերութիւն, ամբողջութեան յղացում:
- ԺԱ. դարուն հայերու արտագաղթ՝ Եւրոպա: Ռոման, ապա կոթական ոճերու յառաջացում:
- Բազրատունեաց հարստութեամբ Հայաստան միջին դարերէն կ'անցնի Նոր դարերուն:

Ը. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԲԻԶԱՆԴԻՈՆ

- Բիւզանդիոն՝ Եւրոպայի վահանը:
- Հայաստան անոր կու տայ զինուոր, իրաւագէտ, ճարտարապետ, կայսր:
- Հայ զինուորը բիւզանդական բանակին ամենէն յարատեւ վարձկանը կ'ըլլայ՝ ընդհարման զօրագունդերուն եւ պալատի պահակագունդերուն մէջ: Զինուորական հայկական գաղութներ կայսրութեան ծայրամասերուն վրայ (Կապադովկիա, Թրակիա, Մակեդոնիա եւ այլն): Մեծ թիւով սպաներ:
- Ե. – Զ. դարերուն կայսրութեան պահպանման եւ վերականգնումին կը նպաստեն Ներսէս եւ ուրիշներ:
- Կու տանք 12 կայսրեր՝ Մակեդոնական հարստութիւն,

867-1025: Անբաղդատելի մեծութեան շրջան մը.

սահմաններու ընդարձակում, դաշնակից

պետութիւններու ստեղծումը սահմաններուն վրայ:

- Ռուսիոյ քրիստոնէացումը:
- Վասիլ Ա., Լեկապէն, Նիկոֆոր Ֆոկաս, Յովհաննէս Զմշկիկ, եւ ուրիշներ:
- Հայկական կնիքը անջնջելի հետք կը ձգէ Բիւզանդիոնի վրայ:
- Բիւզանդիոն դժբախտաբար քիչ անգամ կ'ըմբռնէ Հայաստանի իրեն համար ունեցած կարեւորութիւնը:

Թ. ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

1080 – 1375 - Կիլիկիոյ հայկական պետութիւնը⁷

1080 – 1095 - Ռուբէն իշխան:

- Բագրատունեանց տոհմէն, իր ժողովուրդով կը գաղթէ Կիլիկիա, Տարսուսեան լեռներուն վրայ կը հաստատուի: Կեդրոնը՝ Բարձրբերդ:
- Ինքզինք Բիւզանդիոնի թշնամի կը յայտարարէ:
- Ետ կը մղէ դրացի պետութեանց բոլոր յարձակումները:
- Արտաքին կացութիւն՝ Արաբական կայսրութիւնը քայքայուած է սելճուքներուն կողմէ, որոնք սակայն չեն յաջողիր մեծ եւ զօրաւոր պետութիւն մը կազմել:

1095 – 1100 - Կոստանդին իշխան:

- Ընդարձակում, դիմադրութիւն դրացիներու յարձակումներուն:
- Օժանդակութիւն (պարենաւորում, գործնական աջակցութիւն եւ զինուորական ուժ) Ա. խաչակրութեան, որ կ'անցնի Կիլիկիայէն: Երուսաղէմի առումէն ետք հնարաւոր կը դառնայ Անտիոքի գրաւումը:
- Նոր Հայաստան դուրս կու գայ իր կղզիացումէն:

⁷ Կը յիշատակուի նաև որպէս Նոր Հայաստան կամ Փոքր Հայաստան:

ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ - ԱՌԱՋԻՆ ԵՐՋԱՆ (1080-1266)
CILICIAN KINGDOM - EARLY PERIOD (1080-1266)



1100 – 1129 - Թորոս Ա. իշխան:

- Դիմադրութիւն Բիւզանդիոնի եւ թուրքերուն:
- Բիւզանդացիներէն կ'ազատէ Անարզաբան եւ Սիսը: Կը գրաւէ Կիզիսդրա դղեակը եւ կը լուծէ Գագիկ Բ.-ի վրէժը՝ սպանելով անոր դահիճները:
- Շինել կու տայ Դրազարկ վանքը, ուր եւ կը թաղուի:

1129 – 1137 - Լեւոն Ա. իշխան:

- Կը վտարէ բիւզանդացիք, կը գրաւէ ծովեզերեայ քաղաքները, կը հասնի Միջերկրական ծով:
- Ետ կը մղէ Բիւզանդիոնի կողմէ հրահրուած թրքական յարձակումները:

1137

- Բիւզանդիոնի Յովհաննէս Բ. Կոմնենոս կայսրը կը յարձակի: Լեւոն՝ անձնատուր: Որդին՝ Թորոս, կը գերեվարուի:

1137 – 1145

- Աւերում յոյներուն եւ թուրքերուն կողմէ:

1145 – 1168 - Թորոս Բ. իշխան (Լեւոնի):

- Փախուստ Պոլսէն: Ժողովուրդը ոտքի կը հանէ եւ եղբայրներուն աջակցութեամբ կը նուաճէ երկիրը:
- Պարտութեան կը մատնէ Մանուէլ Կոմնենոս կայսրը, որ 12 000 հոգիով յարձակած էր:
- Կը յաղթէ նաեւ Գոնիայի սուլթանին եւ Անտիոքի խնամակալին, որոնք նոյնպէս յարձակած էին:
- Կայսրը կը վերադառնայ 20 000-նոց բանակով: Արի դիմադրութիւն լեռներուն մէջ: Կը գրաւուին դաշտային քաղաքները:

1159

- Հաշտութիւն՝ Երուսաղէմի միջնորդութեամբ:
- Յաղթական պատերազմներ Իկոնիոյ եւ Հալէպի սուլթաններուն դէմ՝ խաչակիրներուն օգնելու համար:
- Պատեհապաշտ կայսրը դարձեալ կը յարձակի: Տարսոնի մէջ փառաւոր յաղթանակով մը Թորոս կը տիրանայ ամբողջ երկրին:

1168 – 1169 - Ռուբէն Բ. իշխան:

- Իսլամանալով կը փորձէ գահին տիրանալ: Կը սպանուի հայոց կողմէ:

1169 – 1174 - Սլեհ իշխան:

- Իկոնիոյ եւ Հալէպի սուլթաններուն աջակցութեամբ կը տիրանայ գահին: Ինքն ալ կը սպանուի:

1174 – 1185 - Ռուբէն Գ. իշխան:

- Դաւադրաբար գերի կը բռնուի Անտիոքի վեհապետին կողմէ: Եղբայրը՝ Լեւոն, կ'ազատէ զինք:
- Բարի եւ շինարար: Քաղաքներ, վանքեր, նուիրատուութիւններ:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

- Սալահետտին Եգիպտոսի մէջ կը հիմնէ մահմետական զօրաւոր պետութիւն, կը յաղթէ խաչակիրներուն: Կը գրաւէ Երուսաղէմը 1187-ին: Խաչակիրներու հիմնած պետութիւններէն կը մնայ Երուսաղէմը՝ առանց Երուսաղէմի:

1187 – 1219 - Լեւոն Բ. (Մեծագործ):

- Արեւմուտքի ճանչնալ կու տայ նոր Հայաստանը իբր կայուն, զօրաւոր եւ անկախ պետութիւն: Նուրբ դիւանագէտ եւ քաղաքագէտ:
- Ետ կը մղէ Հալէպի եւ Դամասկոսի սուլթաններուն յարձակումները, այսպէսով տկարացնելով Սալահետտինի ոյժը Երուսաղէմի գրաւման ատեն:
- Կը կասեցնէ Իկոնիոյ Սուլթանը եւ Մարաշի մօտ պարտութեան կը մատնէ զայն:
- Կը տիրէ Իկոնիոյ եւ Իզորիոյ սուլթանութեանց:
- Սիսը նոր մայրաքաղաք:
- Կը բազմացնէ եւ կը կրթէ բանակը: Օտարազգի սպաներ:
- Համագործակցութիւն Եւրոպայի հետ՝ խաչակիրներու միջոցաւ:
- Երրորդ խաչակրութիւնը, Գերմանիոյ Ֆրետերիք Շիկամօրուս կայսրի առաջնորդութեամբ: Մեծ օժանդակութիւն եւ աջակցութիւն Լեւոնի կողմէ: Կայսրին նպատակն վերահաստատել Հռովմէական կայսրութիւնը արեւելքէն արեւմուտք: Մեծ դեր վերապահուած է Լեւոնի: Թագ ալ կը խոստացուի:

1199 յունուար 6

- Թագաւորութիւն Լեւոնի՝ Տարսունի մէջ: Հօր վաղաժամ

- մահէն ետք, Ֆրետերիքի որդին՝ Հենրիկոս Զ.-է, որ թագ կու տայ Լեոնի: Նոյնը ընել կը փութայ Բիզանդիոնի կայսրն ալ:
- Երկիրը կը կազմակերպուի եւ կը յառաջդիմէ: Առետուր, Ճարտարարուեստ, կրթութիւն, առողջապահութիւն, բարեսիրութիւն եւ եկեղեցի:
 - Միանալով Իկոնիոյ Սուլթանին, Անտիոքի իշխանը պատերազմ կը յայտարարէ, Լեւոն կը գրաւէ Անտիոքը:
 - Հալէպի Սուլթանը հարկ կը պահանջէ, ինք հարկատու կ'ըլլայ:
 - 1217
 - Կիլիկիա կ'արշաւէ դարձեալ Իկոնիոյ Սուլթանը եւ կը պարտուի:
 - Լեւոն կը փորձէ հայ եկեղեցին միացնել Վատիկանի՝ անոր աջակցութիւնը ստանալու սին յոյսերով:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

- Խաչակիրները տկարացած են: Չեն կրնար դրական գործ տեսնել:

ԺԲ. – ԺԳ. դարեր

- Կ'երեւին Ճէնկիզ Խանի մոնկոլները: Կը յաղթեն Եգիպտոսի մեմլուքներուն, կը ջարդեն թուրքն ու արաբը: Կ'աւերեն Մեծ Հայքը: Չեն յարձակիր Կիլիկիոյ եւ խաչակիրներուն վրայ:
- Հայերը նոյնիսկ պահ մը կը մտածեն քրիստոնէացնել զանոնք:
- Մոնկոլները կը քաշուին եւ կ'ամփոփուին Պարսկաստանի եւ Միջագետքի մէջ:
- Մեմլուքները կ'ոչնչացնեն Արեւելքի բոլոր քրիստոնեայ պետութիւնները, բացի Նոր Հայաստանէն:

1220 – 1226 - Պարոն Կոստանդին:

- Լեւոնի Զապէլ դստեր խնամակալը կը կառավարէ երկիրը:
- Անտիոքի Իշխանը կ'ուզէ գրաւել գահը: Կոստանդին կը յաղթէ եւ գերի կը բռնէ զայն:

1226 – 1270 - Հեթում Ա.:

- Կոստանդինի զաւակը եւ Զապէլի ամուսինը:
- Իկոնիոյ թուրքերուն յափշտակած հողերը ետ կ'առնէ:

- Կը կռթնի մոնկոլներուն՝ դիմադրելու համար մեմլուքներուն:
- Զինակցելու համար կ'երթայ Գարագորում՝ Մոնկոլիոյ մայրաքաղաքը:
- Մոնկոլներու հետ կը կռուի Հալէպի սուլթանին դէմ: Խանը կը մեռնի եւ անոր յաջորդը բանակը անգլուխ կը ձգէ, Մոնկոլիա վերադառնալ կը ստիպուի: Եգիպտացիք կը յաղթեն: Վայրագութիւններ եւ քանդումներ: Հաշտութիւն: Հերթում վրայ կու տայ Տերպեսաք դղեակը:

1270 – 1289 - Լեւոն Գ.:

- Կը դիմագրաւէ հայ ազնուականներու ապստամբութիւն մը:

1273

- Եգիպտոսի սուլթան Պիպարս կը գրաւէ դաշտային Կիլիկիան, կը հրկիզէ Տարսոնը: Զարդ: Սիսի մէջ անդուլ դիմադրութիւն:

1276

- Հակայարծակում: Պիպարս մահացու վերքով կը փախչի Դամասկոս եւ կը մեռնի:
- Նահանջի կը մատնուի նաեւ Իկոնիոյ Սելճուք սուլթանը, որ առիթէն օգտուած էր:
- Մոնկոլներուն հետ կը քալէ Սուրիոյ վրայ, կը յաղթէ Եգիպտոսի Սուլթանին: Մոնկոլները դարձեալ կը քաշուին, եւ Լեւոն, մինակ մնացած, կը վերադառնայ:

1289 – 1305 - Հերթում Բ.:

- Կը ջանայ ապահովել Մոնկոլներու, Բիւզանդիոնի եւ Կիպրոսի բարեկամութիւնը:
- Գրագէտ ու պատմագէտ: Խաղաղութեան ատեն կը քաշուի վանք, երկիրը կը յանձնէ եղբայրներուն, հարկ եղած ժամանակ մէջտեղ կ'ելլէ:

1292

- Ետ կը մղէ Եգիպտոսի Սուլթանը որ գրաւած էր Հռոմկլա Կաթողիկոսանիստ քաղաքը, գերեվարած Հայրապետը եւ ջարդած ժողովուրդը:
- Դամասկոսի փոխարքան կը յարձակի եւ կը պարտուի:
- Մոնկոլներուն հետ կը ծրագրէ ազատագրել Երուսաղէմը: Մոնկոլները կը լքեն: Ծանր կորուստներով կը վերադառնայ:

- Մոնկոլները մահմետականություն կ'ընդունին աստիճանաբար: Հաւասարակշռութիւնը կը խախտի ի վնաս Հայաստանի:

1303

- Մոնկոլները կ'աւերեն դաշտային Կիլիկիան: Հայերը կ'ապաստանին լեռները: Մոնկոլներէն ետք Մեմլուք եւ Սելճուք կու գան թալանը շարունակելու: Հեթում կը յաղթէ անոնց եւ 7000 մեռեալ կը խլէ: Հաշտութիւն:
- Կը փնտռէ Վատիկանի օգնութիւնը:

1305 – 1307 - Լեւոն Դ.:

- Կը փորձէ գլուխ հանել միացումը Վատիկանի հետ:
- Մոնկոլները հայերու հրաւերով կու գան եւ կը գրաւեն երկիրը: Կը սպանեն Լեւոն եւ Հեթում:

1308 – 1320 - Օշին:

- Կը վտարէ Մոնկոլները, կը վերակազմէ եւ կը զօրացնէ երկիրը:
- Պարիսպներ, Տարսոնի եկեղեցին, եւ այլն:
- Քօղարկուած փորձեր Վատիկանի միանալու համար:
- Օշին Պալ իշխանը կը կասեցնէ թուքմէններու յարձակումը:

1320 – 1340 - Լեւոն Ե.:

- Օշին Պալի խնամակալութեամբ պատանի Լեւոն գահ կը բարձրանայ:
- Կը փորձէ եկեղեցին լատինացնել: Օտար ամուսնութիւն կը կնքէ: Ազգային տարրերը իր դէմ կ'ապաստամբին: Կը զսպէ զանոնք:
- Եգիպտոսի սուլթանը սելճուքներուն եւ թուրքերուն հետ կը յարձակի: Հերոսական յաղթանակ կը տանին հայերը շնորհիւ Երիտասարդութեան հայդուկային խումբերուն:

1323

- Գահիրէի մէջ Եգիպտոսի հետ կը կնքուի 15 տարուան զինադուլ: Եգիպտոս յանձն կ'առնէ կառուցել քանդուած բերդերը:

1335

- Հաւատալով Ֆրանսայի եւ Վատիկանի աջակցութեան խոստումներուն՝ կը վերսկսի կռուիլ Եգիպտոսի դէմ: Օգնութիւն չի գար: Պարտութիւն: Սուլթանը կը յօժարի ընդունիլ Կիլիկիոյ գոյութիւնը պայմանաւ որ չկապուի Արեւմուտքի:

- 1342 – 1375 - Լուսինեաններ (լատին):
- 1342 – 1374 - Քուիտոն, Կոստանդին Դ. եւ Կոստանդին Ե.:
- Լատինացման ջանքեր: Կը սպանուին հայոց կողմէ:

1374 – 1375 - Լեւոն Զ.:

- Երկրին մեծ մասը գրաւուած է Եգիպտոսի եւ թուրքմէններու կողմէ:
- Կը մերժէ իսլամացման առաջարկ մը: Եգիպտոս կը յարձակի 30 000 զօրքով: Սիսի մէջ քանի մը հազար կտորիճներու յուսահատ դիմադրութիւն: Թագաւորը եւ ժողովուրդը անհամաձայն:

1375 - Սիս կը յանձնուի:

- Հայը կը կորսնցնէ իր անկախութիւնը՝ զայն պաշտպանելով զէնքը ծեռին:

ԺԴ. – ԺԶ. դարեր

- Եգիպտական իշխանութիւն:
- Ապա՝ Օսմանեան: Աւերածութիւն:

ԶԻՆՈՐԴԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

- Հինգ դասակարգեր՝ թագաւոր, բարձր ազնուականներ, (մեծ պարոններ, եպիսկոպոսներ), Բ. կարգի ազնուականներ (ասպետներ, սպաներ, վանականներ), Գ. կարգի ազնուականներ, քաղքենիութիւն եւ գիւղացիութիւն, ճորտեր (նախահայկական Կիլիկիոյ բնակիչները):
- Աւատական կարգեր արեւմտեան ըմբռնումով: Լեւոն Բ. կը հաշտեցնէ հայկական աւանդական բարքերը արեւմտեան նոր կարգերուն հետ: Մեծ ազնուականները՝ թագաւորին հաւատարիմ եւ հարկատու:
- Մահուան պատիժը միայն թագաւորը կրնայ տալ:
- Պալատը, նախարարները եւ բանակը եւրոպական ձեւով կը կազմակերպուին:
- Դեսպաններ՝ Բիւզանդիոնի, Նափոլիի, Ճենովայի, Վենետիկի, Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Անգլիոյ մէջ:
- Բանակը՝ թագաւորին ենթակայ: 5000 – 10 000: Զրահապատ հեծելազօրք:
- Հայու զինուորական յատկութիւնները անաղարտ կը մնան:

- Առաջին եւ ամենէն մեծ խաչակրութիւնը կը յաջողի շնորհիւ հայկական օժանդակութեան: Խաչակիրներուն կողմէ 1124-ին Տիրոս քաղաքին գրաւումը՝ շնորհիւ հայ զինուորական ճարտարապետի մը:
- Եգիպտոսի մէջ Ֆաթիմեան խալիֆաներու իմաստուն եւ քաջարի զինուորականները՝ Պատրլ էլ-Կամալի եւ որդին՝ Աֆտալ, հայեր են:
- Ռազմական ճարտարապետութեան գլուխ գործոցներ:
- Արտադրութեան եւ փոխանակութեան կարելոր կեդրոն մը կը հանդիսանայ Կիլիկիա, որմէ կ'անցնին ցամաքային եւ ծովային բազմաթիւ գիծեր:
- Լեւոն Բ. կը յաջողի Արեւմուտքի հետաքրքրութիւնը Հայաստանի վրայ դարձնել:
- Մասնաւոր առանձնաշնորհումներ Վենետիկի, Ճենովայի, Ֆրանսայի եւ այլն:
- Բուրդ, այծի մազով կերպաս, մետաքս, հիւսուածեղէններ, մետաղներ (երկաթ), փայտ, ցորեն, գինի, չամիչ, ձի եւ ջորի:
- Այսս նաւահանգիստը, Մամեսիա, Ատանա եւ Սիս քաղաքները՝ առետուրի եւ ճարտարարուեստի կարելոր կեդրոններ:
- Հայկական առաջին նաւատորմիդը կապ կը հաստատէ Իտալիոյ հետ:
- Լատինական ազդեցութիւնը մշակոյթին վրայ: Ֆրանսերէնը եւ լատիներէնը հայերէնի կողքին պալատին մէջ: Իտալերէնը առետուրի մէջ:
- Գրականութեան արծաթի դարը:
- Ներսէս Շնորհալի եւ Գրիգոր Տղայ կաթողիկոսներ (ողբեր):
- Մաթէոս Ռոմայեցի (պատմութիւն):
- Մխիթար Անեցի (պատմութիւն):
- Վահրամ Թաբունի (Ռուբինեաններու պատմութիւն):
- Սմբատ Գունդստապլ (Ժամանակագրութիւն):
- Ներսէս Լամբրոնացի (աստուածաբանական գործեր):
- Հայը շփման մէջ կը մտնէ Արեւմուտքի հետ:
- Կ'երկարածգէ կապը Արեւմուտքի եւ Բիւզանդիոնի միջեւ:
- Երեք դար ազատութիւն եւ քաղաքակրթութիւն կը պաշտպանուին:

Ժ. ՀԱՅԱՍՏԱՆ ԹՈՒՐԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ

ՍԵԼՃՈՒՔՆԵՐԸ

ԺԱ. դար

- Սելճուքները կ'արշաւեն Հայաստանի վրայ: Մանագկերտի մէջ Բիւզանդիոն կը պարտուի: Կը հասնին Կեսարիա, Իկոնիոյ սուլթանութիւնը կը հիմնեն:

ԺԲ. դար

- Հայաստանի եւ Քիւրտիստանի միացեալ կառավարութիւն մը կը կազմեն:

ԺԳ. դար

- Սելճուքեան տիրապետութիւն:
- Պահ մը Վրաստանի Բագրատունի Թագաւորները կը գրաւեն Հայաստանի մէկ մասը (Անի, Կարս)
- Մինչեւ ԺԴ. դար
- Կը պահեն վաչկատուն գոյավիճակ մը:

ՄՈՆԿՈՒՆԵՐԸ

ԺԲ. դար

- Կը սկսին մոնկոլեան արշաւանքները՝ Ճէնկիզ խանի առաջնորդութեամբ:
- «Աւերումի կայսրութիւն» մը Փեքինէն էրզրում:

ԺԴ. դար

- Սելճուք եւ Մոնկոլ իշխանութիւններ Հայաստանի վրայ, փոխն ի փոխ:

ԺԵ. դար

- Թաթար (թիւրքմէն, իսլամացած մոնկոլներ) արշաւանքները՝ Լէնկ-թիմուրի առաջնորդութեամբ. կը գրաւեն Ռուսաստան եւ Սիպերիա:

1400

- Կ'աւերուի Հայաստան, կը կոտորուի ժողովուրդը:

- Թիրքմէն տիրապետութիւն:

ՀԱՅՈՑ ՉԱՂԹԸ

ԺԱ. դար

- Անհի անկումէն ետք, առաջին մեծ գաղթը՝ Կիլիկիա, Արծրունի իշխանի գաղթը՝ Սեբաստիա:

ԺԲ. – ԺԳ. դարեր

- Թաթարներու կողմէ Հայաստանի առումէն ետք 200 000 հայեր խրիմ եւ Մոլտաւիա կը գաղթեն: Թաթարները հոն ալ հասնելէ ետք՝ Լեհաստան, 50 000-ով: Լաւ ընդունելութիւն, բայց եւ ձուլում:

ԺԲ. – ԺԵ. դարեր

- Գաղթ դէպի Մոլտաւիա: Թուրքերու արշաւանքէն ետք 25 000-ով՝ Թրանսիլվանիա եւ Հունգարիա. Էլիզապէթթաթ եւ Արմէնիերշթաթ կիսանկախ քաղաքները կը հիմնուին:

Մինչեւ ԺԸ. դար

- Խրիմ՝ «Ծովային Հայաստան»:

ՕՍՄԱՆԵԱՆ ԹՈՒՐԷՐԸ

ԺԳ. դար

- Մոնկոլական արշաւանքներու հետեւանքով Օսմանեան թուրքերը կը ձգեն Թուրքիստանը, կը հաստատուին Փոքր Ասիա՝ առանց Հայաստանը գրաւելու: Սելճուքները տկարացած: Բիւզանդիոն՝ անկումի մէջ: Պառակտուած՝ ներքին կռիւներով, յոյները Պալքանեան սլաւ պատերազմին օգնութիւն կը խնդրեն թուրքերէն, որոնք այսպէսով Եւրոպա կը մտնեն: Կը գրաւեն Պալքանները, կը ձգմեն ժողովուրդը: Իբր Բիւզանդիոն կը մնայ Պոլիսը իր արուարձաններով:

ԺԴ. դար

- Փոքր Ասիոյ մէջ հայերը թուրքերուն կ'աջակցին: Փոխադարձ վստահութիւն: Թուրքը կը ներկայանայ թուրանական միւս ժողովուրդներէն աւելի բարձր կորովով, կարգապահութեամբ, կազմակերպուած:

1453

- Պոլսոյ առումը:
- Մոհամետ Բ. սուլթանը Պոլսոյ առումէն ետք յոյներուն եւ հայերուն (հայերը չնչին փոքրամասնութիւն են) կու տայ առանձնաշնորհումներ՝ պատրիարքութիւն, քաղաքական լայն իրաւասութիւններով՝ կայսրութեան բոլոր հայերուն, ինչպէս նաեւ Սուրիոյ Յակոբեաններուն ու ղպտիներուն վրայ:

ԺԶ. դար

- Պոլսոյ անկումէն 50 տարի ետք, Պարսկաստանի դէմ պատերազմի հետեւանքով կը գրաւեն Հայաստանը:

ԺԶ. – ԺԷ. դար

- Աւելի քան մէկ դար՝ թուրք-պարսիկ պատերազմներ: Հայաստան կը բաժնուի անոնց միջեւ, մեծ մասը՝ թուրքին: Թրքական կայսրութիւնը կը տարածուի Վիէնայէն Թաւրիզ: Անհանդուրժելի պայմաններ՝ քաղաքակրթուած ժողովուրդներուն համար: Քրիստոնէան՝ գերի, պարտի հայթայթել նիւթական աղբիւրներ եւ մարդկային ատաղծ (կին, մանուկ):

ԺԷ. դար

- Կը սկսի անկումը: Տեղական բռնակալները կը կը գործնան ի վնաս կեդրոնին:

ԺԷ. – ԺԸ. դար

- Մեծ վեզիրներու տիրապետութիւնը:

ԺԸ. – ԺԹ. դար

- Ենիշերական եւ ներքին պետերու տիրապետութիւն: Ժողովուրդ կառավարելու անկարողութիւն: Կամայականութիւն, ճնշում, տեսական հարստահարութիւններ, ապականութիւն: Կառավարիչները կը գնեն իրենց պաշտօնները: Տուրքերը՝ իրենց կամքին համաձայն: Հակառակ այդ բոլորին յոյներն ու հայերը կը կազմեն երկրին գործուն տարրը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԺԳ. – ԺԴ. դար

- Արաբական տիրապետութենէն ետք մոնկոլը աւերեց եւ թալանեց Պարսկաստանը:

ԺԵ. դար

- Թուրքմենը նոյնը ըրաւ:

ԺԵ. դար

- Թուրանական ուժի անկում. Պարսկաստան՝ անկախ, կը վտարէ թուրքմէնը Հայաստանի եւ Քիւրտիստանի մեծագոյն մասերէն:

1620

- Դաշնագրով՝ Երեւան, Նախիջեւան եւ Ղարաբաղ՝ Պարսկաստանի:

1602 – 1620

- Թուրք-պարսիկ պատերազմները կ'աւերեն Հայաստանը: Շահ Աբբաս Ա. կը կռուի, կը նահանջէ, բռնի գաղթեցնելով հայը եւ անապատի վերածելով երկիրը:
- 50 000 հայեր ճամբայ կ'ելլեն, կէսը կը բնաջնջուի: Կը հիմնեն նոր Տուլֆան: Թրքականէն աւելի ազատ իրաւակարգ մը: Ետքը՝ անկում:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԺԸ. դար

- Մինչեւ այս դարը 5 հայ իշխանութիւնները՝ Կիւլիստանի, Զրաբերդի, Խաչէնի, Վարանդայի եւ Դիզակի, զինու ուժով կը պահեն իրենց անկախութիւնը, կը կռուին իրենց դրացի մահմետական պետերու դէմ:

1680 – 1771

- Իսրայէլ Օրի կը հետապնդէ Հայաստանի անկախութիւնը:

1722 – 1730

- Թուրք-պարսիկ կռիւին ընթացքին՝ ամբողջական անկախութիւն:
- Յարձակում թուրքերուն կողմէ: Ինքնապաշտպանութիւն Դաւիթ Բէկի եւ Մխիթար Սպարապետի ղեկավարութեամբ: Ի վերջոյ թուրքերը կը գրաւեն Ղարաբաղը:

1735

- Պարսից Նատիր Շահը կը վտարէ թուրքերը: Յաջորդ շահերը կը փորձեն վերցնել Ղարաբաղի առանձնաշնորհումները:

ԺԸ. դար

- Պարսիկ-թաթար պատերազմ, աւերում: Օգնութիւն կը խնդրեն Ռուսիայէն:
- Ռուսական նահանգի մը կը վերածուի Ղարաբաղը:
- Գերութեան երկարատեւ դարերուն Ղարաբաղի, ինչպէս՝ Տաւրոսի եւ Սասնոյ լեռնականները իրենց ինքնավարութեան հետ կրցան անեղծ պահել հայու նկարագիրը, ռազմական ամանդութիւնները, կորովը, ձեռներէցութեան ոգին:

ԳԻՆՈՒՐԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

- Ղարաբաղի մէջ Դաւիթ Բէկ կը սկսէր 500 հոգիով, կը հասնէր մինչեւ 7000-նոց բանակի, համախմբելով բոլոր իշխաններու ուժերը, հերոսական կռիւներ Ղափանի, Հալիձորի մէջ:
- Հայ զինուորներ՝ ենիչերիներու շարքերուն մէջ, մեմլուքներու մէջ, Նափոլիոնի պահակագունդին մէջ:
- Խրիմի Գաֆա քաղաքը հայ զօրագունդի մը կողմէ քանիցս կը պաշտպանուի:
- Հայ զինուորը Լեհաստանի պաշտպանութեան մէջ առասպելական համբաւ կը շահի:
- Նոյնպէս՝ թուրքերուն դէմ Հունգարիոյ կռիւներուն մէջ. Վառնայի ձակատամարտը (1444): Հունգարիոյ մէջ 1849-ի ապստամբութեան երկու հայ զինուորականներ կը զոհուին:
- Թուրքիոյ բանակին զինուորական երկրաչափներն ու բանուորները հայեր էին միշտ:
- Վենետիկի մէջ հայ ճարտարապետ Անթոնիօ Սուրեան հնարքով մը անշարժութեան կը մատնէր ցեղանաւերը:
- Տնտեսական գահավէժ անկում: Երկրագործութիւնը կը փճանայ, ոռոգման ցանցերը կը քանդուին, անտառները կը սպառին: Ճարտարարուեստ եւ առեւտուր կը դադրին՝ փոխադրութեան միջոցներու քանդումով: Վերադարձ միջին դարերու գիւղական ինքնաբաւ եւ փակ դրութեան:
- Ղարաբաղի մէջ կը շարունակուի մետաքսի եւ ներկի արտադրութիւնը:

- Աղքատացում, ծանր տուրքեր, հնձքահաւաքը միայն հարկահաւաքի ներկայութեամբ:
- Պաղտատ եւ Պոլիս՝ անկեալ: Հնդկաստանի, Պարսկաստանի եւ Արեւմուտքի միջեւ էրզրումի եւ Տիրապիզոնի վրայով գիծ մը միայն: Էրզրում առետուրի կեդրոն:
- Վաճառականը ֆիզիքական տոկունութիւն եւ հոգեկան քաջութիւն պէտք է ունենայ: Հայ վաճառականներու ընկերութիւններ Ամսթերտամի, Լիվուռնի, Հնդկաստանի, Վրաստանի, Պարսկաստանի, եւ Ռուսիոյ մէջ: Անգլիա Հնդկաստանը ժառանգեց հայերէն:
- Հայերը կը կազմակերպեն թուրք բանակի մատակարարման սպասարկութիւնը:
- Ֆրանսա հայեր կը հրաւիրէ առետուրը վերակենդանացնելու համար:
- Ռիշըլիէօ (1635) առանձնաշնորհումներ կու տայ հայերուն, որոնք շերամաբուծութիւնն ու ներկի ճարտարարուեստը Ֆրանսա կը մտցնեն:
- Լեհաստան հայ առետրական դիւանագէտներէն մեծ օգուտ կը տեսնէ:
- Ռուսիոյ Կատարինէ Բ. թագուհին Խրիմի հայերուն օգնութեան կը դիմէ: Հայերը անապատները քաղաքի վերածեցին:
- Վանքերուն մէջ կղզիացած ջանքեր՝ մշակութային գետնի վրայ:

ԺԳ. դար

- Կիրակոս Գանձակեցի (մոնկոլներու, վրաց, աղուանից պատմութիւնը):
- Մաղաքիա Աբեղայ (թաթարներու պատմութիւնը):
- Վարդան Արեւելքցի (պատմութիւն):
- Յովհաննէս Երզնկացի (աստղաբաշխութիւն):

ԺԴ. դար

- Ստեփան Օրբելեան (Սիւնեաց պատմութիւն):
- Հեթում (թաթարներու պատմութիւն):
- Յովհաննէս Ռրոտնեցի (Աստուածաբանութիւն):
- Գրիգոր Տաթեւացի:

ԺԵ. դար

- Թովմաս Մեծփեցի (Լենկթիմուրի պատմութիւնը):

- Ամիրտովլաթ Ամասիացի (Բժշկական գործեր):
- ԺԷ. դար
- Արշաիր Թաւրիզեցի (պարսկահայոց պատմութիւն):
- ԺԴ. – ԺԶ. դար
- Հայ աշուղներ՝ Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Առաքել Բաղիշեցի, Մկրտիչ Նաղաշ, Յովհաննէս Թլկուրանցի, Գրիգոր Ախթամարեցի, Նահապետ Քուչակ եւ Աշուղ Զիւանի:
- -Հայ արուեստագէտներն ու արհեստագէտները իրենց մարգերուն մէջ կատարելութեանց կը հասնին:
- Խաչքարերու ճարտարապետութիւն:

ԺԱ. ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

ԺԸ. դար

- Հայութիւն եւ Արեւելք կ'ապրին միջնադարու մէջ:
- ԺԸ. դարու կէսէն ասդին՝ շփում Եւրոպայի հետ, բարենորոգութեան եւ ազատագրութեան շարժում:
- Ֆրանսական յեղափոխութիւնը (1789), ազգերու գերիշխանութեան սկզբունքը:
- Գերմանական ռոմանթիզմը:

ԺԹ. դար

- Բարեկարգիչ վեհապետներ, Եգիպտոսի Մուհամմետ Ալին, Թուրքիոյ ՄաՀմուտ Երկրորդը:
- Իտալիա՝ Կարիպալտի:
- Կրօնական առաքելութեանց դպրոցները Թուրքիոյ մէջ:
- Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի միջեւ առեւտրական կապերու զօրացում:
- Պալքանեան անկախութիւնները:
- Ռուսիա Անդրկովկաս եւ Արեւելահայաստան կը թափանցէ:

ՀԱՅ ԵՎԵՂԵՑԻՆ

- Մոլեռանդ եւ յետամնաց ժողովուրդներով շրջապատուած հայուն համար եկեղեցին եղաւ հայրենասիրութեան եւ հաւատքի աւանդապահը:

- Ժողովրդավարական նկարագիրը հայ եկեղեցւոյ: Ազգ եւ եկեղեցի մէկ են:
- Եկեղեցին կառավարեց ազգը, եղաւ անոր խորհրդանիշը:
- Հայու հաւատքը եւ խորունկ հաւատարմութիւնը կրօնքի հանդէպ:

1609

- Սարգիս Եպիսկոպոս եւ Հայր Կիրակոս կը հիմնեն Տաթեւի Վանքը. կը դառնայ վերածնունդի օճախ:

ԺԸ. դար

- Սիմոն կաթողիկոս, Կոլոտ եւ Նալեան պատրիարքներ:

ԺԹ. դար

- Ներսէս կաթողիկոս, Խրիմեան Հայրիկ, Կոմիտաս վարդապետ՝ հայ երգի Մեսրոպ Մաշտոցը:
- Այսպանելի կողմերը չեն կրնար ստուեր ձգել հայ եկեղեցւոյ խաղացած դերին վրայ:

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ

1717

- Սուրբ Ղազար. Մխիթար Սեբաստացի:
- Կրօնական, գիտական, մտաւոր վերածնունդ: Գրաբարի վերակենդանացում: Հրատարակչական, թարգմանական, կրթական գործ: Կաթոլիկութեան տարածում:

1807

- Վիէննայի միաբանութիւնը (Թրիէսթէն)
- Վենետիկ եւ Վիէննա՝ զոյգ համալսարաններ. մատենադարաններ:

1816

- Հայագիտութեան կաճառ:
- Կը հրատարակուին քերականութիւն, բառարաններ, հանրագիտարան, դասագրքեր, թարգմանութիւններ:
- Հ. Մ. Չամչեան (հայոց պատմութիւն), Հ. Ղ. Ինճիճեան (Հայաստանի աշխարհագրութիւն), Հ. Ղ. Ալիշան (պատմական ուսումնասիրութիւններ), Հ. Աւքերեան (Բառարան):
- Ճեմարաններ՝ Վենետիկ եւ Փատուա (ապա, Փարիզ,

Սեր), հնդկահայերու նուիրատութեամբ (Մուրատ-Ռաֆայէլեան):

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՏԸ (1453)

1512

- Վենետիկ, իտալական տպարանէ մը՝ Ա. հայերէն գիրքը՝ «Ուրբաթագիրք», Յակոբ Մեղապարտ:
- Վենետիկ, Աբգար Թոքատցի, Ա. հայկական տպարանը:
- Պոլիս, Սպահան, Ամսթերտամ, Մատրաս, Էջմիածին, Զմիւռնիա, Վենետիկ՝ հայկական տպարաններ:
- Ամսթերտամ՝ հայերէն Աստուածաշունչի Ա. տպագրութիւն, Ոսկան Վրդ. Երեւանցիի կողմէ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸ

Մինչեւ 1790

- Թուրքիոյ քրիստոնեային կ'արգիլուի դպրոց ունենալ. միայն դպրեվանք:

1790 – 1800

- Մանչերու վարժարաններ:

1820

- Նաեւ աղջկանց վարժարաններ:
- Դպրոցները ոչ մէկ պետական օժանդակութիւն կը ստանան: Կը պահուին համայնքի միջոցներով: Ձրի կրթութիւն:
- Շուտով, յոյներուն հետ հայերը Օսմանեան կայսրութեան ամենայառաջադէմ տարրը կը հանդիսանան:

1845

- Նահանգներուն մէջ ցանց մը, իւրաքանչիւր եկեղեցիի կողքին՝ դպրոց մը:
- Երկրորդական վարժարաններ՝ նուիրատութիւններով:
- Օրրաններ մտաւորական ընտրանիին՝ Էրզրումի Սանասարեանը, Պոլսոյ Կեդրոնականը, Սկիւտարի Պէրպէրեանը, Վանի վարժապետանոցը, Վարազայ վանքի դպրոցը, Արմաշի դպրեվանքը: Օգտուած ենք նաեւ ամերիկեան եւ ֆրանսական դպրոցներէն:
- Ռուսահայաստանի մէջ եւս զուգընթաց վերելք բայց

խափանումներով՝ Մոսկուայի Լազարեան ճեմարանը, Թիֆլիսի Ներսեսեանը, Էջմիածնայ Գէորգեանը:

- Հայ ուսանողները արտասահմանէն ետ կու գան հայրենիքին ծառայելու համար:

ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

- Հայ գրականութիւնը վերապրած է ժողովրդական բանահիւսութեամբ:

ԺԸ. դար

- Սայաթ Նովա մեծ տաղասացը՝ աշուղ-բանաստեղծ:

ԺԹ. դար

- Վերածնունդ:
- Մխիթարեանները. Հայր Արսէն Բագրատունի՝ դիւցազներգակ, Հայր Ղեւոնդ Ալիշան՝ բանաստեղծ:
- Խաչատուր Աբովեան. հիմնադիր աշխարհաբար գրականութեան («Վերք Հայաստանի») եւ ուսուցիչ:
- Պ. Պռօշեան, Մ. Նալպանտեան, Ս. Նազարեանց, Գ. Արծրունի, Գ. Սնդուկեան, Գամառ Քաթիպա, Խրիմեան Հայրիկ, Ծերենց, Պէշկեթաշլեան, Գ. Օտեան, Ա. Արփիարեան, Յ. Պարոնեան, Րաֆֆի՝ յեղափոխութիւնը ծրագրողը («Կայծեր»):
- Բարձր զգացումներ եւ հայրենասիրութեան ուժգնութիւն:
- Թարգմանութիւններ:
- Հայկական թատրոններ Պոլիս եւ Թիֆլիս. Ադամեան, Հրաչեայ, Սիրանուշ:

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

1794

- Մատրաս՝ «Ազդարար» առաջին հայ թերթը Շմաւոնեան քահանային կողմէ:
- Վենետիկ՝ Մխիթարեաններու թերթը:

1812

- Պոլիս՝ «Բիւզանդական դիտակ», Թուրքիոյ առաջին հայկական թերթը:

1840

- Զմիւռնիա՝ «Արշալոյս», առաջին օրաթերթը, Ղուկաս Պաղտասար:

- Պոլիս, Իւթիւճեանի «Մասիս»-ը, Արփիարեանի «Հայրենիք»-ը:
- Ամսագրեր, պարբերականներ:
- «Արծիւ Վասպուրականի» եւ «Արծիւ Տարօնոյ», Խոիմեան Հայրիկ:

1846

- «Արարատ»՝ Անդրկովկասի մէջ առաջին թերթը, «Մեղու Հայաստանի»:
- Ստեփանոս Նազարեանցի «Հիւսիսափայլ»-ը, Յովհաննէսեանի «Փորձ»-ը (ամսագիր), Գ. Արծրունիի «Մշակ»-ը:
- «Բազմավէպ»՝ Վենետիկ, «Հանդէս ամսօրեայ»՝ Վիէննա:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԳԱՅՈՒՄԸ

- Ազգային արժանապատուութեան զարթօնք՝ Էջմիածին, Երեւան, Վան, Էրզրում, Շուշի, Պոլիս, Զմիւռնիա, Թիֆլիս, Մոսկուա, Վենետիկ, Վիէննա, Ժընեւ, Պոսթըն:
- Արեւելահայաստան ձեռք կ'երկարէ Արեւմտահայաստանի: Հայաստան բաժնուած՝ երեքի: Բայց հայը մէկ է: Ինքնապաշտպանութիւն Կովկասի մէջ՝ ռուսացման դէմ:
- Թուրքիոյ մէջ կրօնք եւ լեզու պահելու, մշակոյթի մակարդակը բարձրացնելու ինչքի եւ կեանքի ապահովութեան ջանք կը տարուի:
- Խրիմեան Հայրիկ՝ Պոլսոյ պատրիարք, ապա կաթողիկոս. հայ իրաւունքի պաշտպան, ազգային զգացումի մարմնացում: Ժողովուրդի ղեկավար՝ անձո՛վ օրինակ: Ազգին համար համախմբման առանցք:

ՀԱՅՈՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

ԺԹ. դար

- Հայկական զարթօնքը՝ ի նպաստ Արեւելքի միւս ժողովուրդներուն:
- Եգիպտոսի, Թուրքիոյ եւ Ռուսիոյ կու տանք մեծ թիւով պաշտօնեաներ եւ վարչագէտներ:

- Օսանեան սահմանադրութեան հեղինակ՝ Գր. Օտեան:
Զօր. Լորիս Մելիքեան՝ Ռուսիա: Պօղոս, Նուպար
փաշաները՝ Եգիպտոս:
- Նոյնիսկ Անգլիոյ համայնքներու պալատին մէջ հայ մը:
- Թուրքիոյ եւ Եգիպտոսի նաեւ կրթական կեանքին
կ'օժանդակենք:
- Պալեանները՝ արքայական ճարտարապետ, Պոլիս:
- Հայը կը հիմնէ թրքական թատրոնը:

ԺԲ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՅԸ

ԹՈՒՐԱՆՑԻՆԵՐՈՒ ՏԵՂԱՏՈՒԹԻՒՆԸ

ԺԴ. դար

- Զինաստանի մէջ:

ԺԵ. դար

- Ռուսիոյ՝ նոյնպէս, Հնդկաստանի մէջ, ուր մասամբ կը
յամենայ մինչեւ ԺԸ. դար:

ԺԶ. դար

- Հունգարիա եւ Աւստրիա կը կասեցնեն յառաջխաղացքը:
- Ռուսիա Սեւ Ծով հասնելով կը վտանգէ Թուրքիան՝ կողէն:
- Ֆրանսական յեղափոխութիւնը Ռուսիան եւ Աւստրիան կը
շեղէ Թուրքիան բաժնելու ծրագրէն:
- Անգլիա, Հնդկաստանի ճամբուն ապահովութեան
համար՝ Թուրքիոյ դաշնակից, կ'արգիլէ Ռուսիոյ Փոքր
Ասիա մուտքը:
- Նեղուցներու տիրանալու Ռուսիոյ բաղձանքին կը
հակառակին Անգլիա եւ Աւստրիա:

1821 – 1830

- Յունաստան կ'ազատագրուի Անգլիոյ, Ֆրանսայի եւ
Ռուսիոյ օժանդակութեամբ: 700 000-էն 300 000 զոհ կու
տայ:

1860

- Ֆրանսա կը միջամտէ ի նպաստ Լիբանանի, նաեւ ի
նպաստ Զէյթունի:

- Եգիպտոսի Մոհամէտ Ալին Թուրքիոյ կը յաղթէ եւ կը գրաւէ Սուրիան:
- Երկար պայքարով եւ անձնագոհութեամբ, նաեւ Ռուսիոյ օգնութեամբ, կ'ազատագրուին պալքանեան միւս ժողովուրդներն ալ:

1804 – 812

- Ապստամբութեամբ՝ սերպերը:

1808 – 1854

- Ռումանիոյ ազատագրական պատերազմները:

1856

- Ռումանիա՝ ազատագրուած:

1851

- Մոնթենեկրօ:

1878

- Ազատ Պուլկարիա:
- Կրետէ 128 տարի, Սերպիա 40, Ռումանիա 100, Պոսնիա եւ Հերցեգովինա 40 տարի կռուեցան իրենց ազատագրութեան համար:
- Բոլոր երկիրներուն մէջ ալ եղան դաւաճանութիւններ, երկպառակտումներ, ներքին պայքարներ, բայց եւ մեծ գոհողութիւններ:
- Օսմանեան կայսրութեան վիճակը եւ բարեկարգութեան փորձերը:
- Թուրքը կ'ապրի քրիստոնէայ տարրին հաշուոյն. այս վերջինը կը ստրկացուի՝ զրկուած ամենէն տարրական իրաւունքներէն, ինչքը եւ կեանքը՝ ենթակայ կառավարութեան եւ մահմետականի յարձակումներուն:
- Քրիստոնէայի վկայութիւնը անընդունելի՝ դատի ընթացքին:
- Կեղեքում, կողոպուտ, յարձակումներ նահանգապետերու եւ տեղական աւատապետերու կողմէ:
- Անիշխանութիւն:
- Այս բոլորը կը սատարեն քրիստոնէաներու անկախութեան ձգտումին:
- Մեծ պետութիւններու շահը կը պահանջէ քայքայելու փոխարէն՝ «բարեկարգել»:
- 1839-ի, 1856-ի, 1875-ի, 1876-ի բարեկարգութեան բոլոր փորձերը՝ ապարդիւն:

ԺԳ. ՌՈՒՍԻԱ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Ռուսիոյ Անդրկովկաս էջքով վերջ հայկական մեկուսացման

ՌՈՒՍ-ՊԱՐՍՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

1822

- Ա. պատերազմ. Մեծն Պետրոս. Իսրայէլ Օրիի դիմումը: Ռուսը կը քաշուի:

1803 – 1809

- Բ. պատերազմ. Կատարինէ Բ. կը գրաւէ Վրաստանը:

1813

- Կիւլիստանի դաշնագիր, Ռուսիոյ՝ Վրաստանը, Ազրպէյճանի հիւսիսային մասը եւ Ղարաբաղը:

1825 – 1827

- Գ. պատերազմ. Շուշիի մէջ հայերու հերոսական դիմադրութիւնը Պարսիկներուն դէմ: Զօր. Մատաթեան:

1828

- Թուրքմենչայի հաշտութիւն. Ռուսիոյ՝ Արեւելահայաստանի մեծ մասը. 35 000 հայեր Պարսկաստանէն Կովկաս կը գաղթեն:
- Հայաստանը Ռուսիոյ համար կարեւոր նիւթական աղբիւր եւ աշխարհագրական դիրք է:
- Հայուն համար ռուսը, բաղդատմամբ պարսիկին, յառաջդիմութեան ազդակ է:

ՌՈՒՍ-ԹՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

1828 – 1829

- Ա. պատերազմ՝ ի նպաստ Յունաստանի: Հայկական գումդեր:

1829

- Էտիրնոպլի հաշտութեամբ՝ Յունաստան անկախ:
- Ռուսը մինչեւ Սեբաստիա կը յառաջանայ: Հայաստան՝ ռազմադաշտ: Անգլիոյ պնդումով ետ կը քաշուի. 100 000 հայեր Կովկաս կը գաղթեն:

1853 – 1856

- Բ.՝ Խրիմի պատերազմ. Հայաստան՝ դարձեալ ռազմավայր: Զօր. Վասիլի Բեիբուրով 6000-ով կը յաղթէ 12 000 թուրքերու՝ Ալեքսանդրապոլի մօտ:

1856

- Փարիզի դաշնագիր՝ Սեւաստապոլի անկումով:

1877 – 1878

- Գ. պատերազմ՝ ի նպաստ Պուլկարիոյ. Հայաստանի՝ մէջ կը շարունակուին կռիւները: Զօրավարներ Միխայիլ Լորիս Մելիքեան, Արշակ Տէր Ղուկասով եւ Յովհաննէս Լազարեւ կ'ապահովեն Ռուսիոյ յաղթանակը:

1878

- Սան Սթեֆանոյի դաշնագիր: Ռուսիոյ՝ Պաթում, Կարս եւ Արտահան. գրաւած է նաեւ այլ ընդարձակ շրջաններ. կը քաշուին. 25 000 հայեր կը գաղթեն Ռուսահայաստան: Զարթնում:

ՑԱՐԱԿԱՆ ԲԱՐԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՂՐԿՈՎԱՍՏԻ ՄԵՋ

- Անդրկովկասը Ռուսիոյ ձեռքին տակ եթէ ոչ ազատութեան, գոնէ կարգապահութեան եւ ապահովութեան վարչակարգ մը կը վայելէ:
- Բնակչութեան աճ, քաղաքներու ընդարձակում, տնտեսական վերելք:
- Անդրկովկասը կը խթանէ ռուսերու երեւակայութիւնը: Կը ներշնչէ արուեստագէտները,
- Բռնի ռուսացման քաղաքականութիւն, սակայն:
- Պարսից եւ թրքաց դէմ ռուսերուն տրուած մեր օգնութեան փոխարէն հայկական նահանգի մը կազմութեան խոստումը չի յարգուիր: Ներսէս եպիսկոպոս Աշտարակեցի կ'աքսորուի:
- Փակել ազգային վարժարանները, գեղջել հայերէնի դասերը:
- Կը խառնուին կաթողիկոսական ընտրութիւններուն:
- Ռուսիա կը շահագործէ հայուն եւ վրացիին ազատութեան ծգտումը, հակառակ անոր որ հայերը հաւատարիմ կը մնան եւ կը սպասեն որ յարգուին հայ լեզուն եւ աւանդութիւնները:
- Ուժ կը տրուի թաթար տարրին:

Ժ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ

ՍԱՆ ՍԹԵՖԱՆՈՅԻ ԵՒ ՊԵՐԼԻՆԻ ՂԱՇՆԱԳՐԵՐԸ – 1878

1862

- Զարդեր՝ Տաւրոսի մէջ:

1869

- Խրիմեանը՝ պատրիարք: Խնդրագրեր՝ Բարձրագոյն դռան: Հրաժարեցում:

1876

- Վանի հայկական թաղը կ'այրուի:

1877 – 1878

- Պատերազմէն առաջ Պուլկարիոյ համար ժողով Պոլսոյ մէջ: Կը ներկայացուի հայկական հարցը:
- Թուրք զօրքին կողմէ խժոժութիւններ, ջարդեր:

1878 մարտ

- Սան Սթեֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածով՝ վարչական ինքնավարութիւն բարենորոգութեան, ապահովութեան երաշխաւորութիւն երզրումի մէջ ռուս բանակի ներկայութեան:

1878 յունիս

- Անգլիա Կիպրոսը կը ստանայ Թուրքիայէն:

1878 յուլիս

- Պերլինի խորհրդաժողով, հրաժարում Սան Սթեֆանոյի դաշնագրէն. Ռուսիոյ բանակին անյապաղ պարպումը, 61-րդ յօդուածով բարենորոգութեանց կը հսկեն մեծ պետութիւններ միասնաբար:
- Հայը տակաւին անկախութեան խօսք չ'ըներ: Խրիմեան եւ երկաթէ շերտեր:

ՄԵԾ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ – 1878 – 1894

- Ռուսիա կը հետապնդէ ռուսացման քաղաքականութիւնը: Թրքահայաստան մը, բարենորոգուած, կրնայ ինքնավար դառնալ եւ իր հետագայ ծաւալումին արգելք ըլլալ:

- Անգլիա կը կարծէ թէ կանգուն Օսմանեան կայսրութիւն մը պատուար կրնայ ըլլալ Ռուսիոյ դէմ, կ'անդրադառնայ, սակայն, թէ արաբ, քիւրտ եւ հայ պետութիւնները աւելի լաւ կրնան ծառայել նոյն նպատակին:
- Ֆրանսա նիւթական շահեր կը հետապնդէ:
- Աւստրիա եւ Հունգարիա գոհ չեն պալքաններէն. Կողմնակից՝ Օսմանեան կայսրութեան:
- Գերմանիա, ինք եւս ճնշող մը, թուրքին հետ է:
- Անգլիոյ արտաքին գործոց նախարարը՝ Լորտ Սալսպրի, հիւպատոսներու հաղորդագրութեանց, վրայ կը փորձէ 61-րդ յօդուածը յարգել տալ: Սուլթան Համիտ կը մերժէ՝ կռնակ ունենալով Անգլիոյ վարչապետ Տիզրայելի:
- Ի զուր կ'անցնին նաեւ Անգլիոյ վարչապետ Կլատսթոնի ջանքերը: Անգլիա Եգիպտոսով զբաղած՝ կը մոռնայ հայերը: Հիւպատոսներու վկայութիւնները կը շահագործէ ի նպաստ իրեն:

ԹՐԲԱԿԱՆ ԲԱՐՍԲԱԿԱՆՈՒԹԻՒՆ

- Մինչեւ 1876 հայը կը նեղուէր կայսրութեան ընդհանուր վիճակէն:
- Պերլինի ժողովէն ետք թուրքը կը դառնայ հակահայ. Հայաստան կրնայ երկրորդ Պուլկարիա մը ըլլալ: Բնաջնջելով հայը կը քանդուին ապագայ հաւանական ինքնավարութեան մը հիմերը:
- Ամեն ջանք հայը փոքրամասնութիւն ցոյց տալու համար:

1877 – 1878

- Պայագիտի եւ Ալաշկերտի մէջ ջարդերու պատճառաւ կայացած էր քիւրտերու մեծամասնութիւն մը:
- Հայկական նահանգներու սահմանային կամայական փոփոխութիւններ:
- Վանայ շուրջ կայ տակաւին 50 000 քառ. քմ տարածութեան վրայ հոծ հայութիւն, որուն հանդէպ թուրքը կ'առնէ հետեւեալ միջոցները.
 - 1 Տաւրոսի հարաւէն 100 000 քիւրտեր Մուշ-Վան-Էրզրում շրջանը կը փոխադրուին:
 - 2 Մշակուած հողը արօտավայրի կը վերածուի:
 - 3 Բռնութիւններ եւ յափշտակութիւններ քիւրտերու կողմէ:

- 4 Կը քաջալերուի հայոց արտագաղթը:
 - 5 Քիւրտ հրոսակները կը զինուին (Համիտիէ) զօրք անունով:
 - 6 Վիճակագրութիւնները կը կեղծուին հայը փոքրամասնութեան վերածելու համար, մինչդէռ 6 նահանգներու 2,5 միլիոն բնակիչներուն կէսը հայ է, կէսը՝ թուրք եւ քիւրտ:
 - 7 Ապօրէն տուրքեր, կողոպուտներ, յափշտակութիւններ, սպանութիւններ, բռնաբարումներ, առեւանգումներ:
 - 8 Ապօրէն տուրքեր նաեւ քիւրտ ցեղապետներու կողմէ:
 - 9 Քիւրտներուն՝ ծմբան պարտադիր ծրի հիւրասիրութիւն հայոց կողմէ:
 - 10 Թուրք զինուորներու տեղաւորում հայ ընտանիքներու մէջ:
 - 11 Կ'արգիլուի հայերուն զինուիլ ինքնապաշտպանութեան համար:
- Թուրքը ամեն կերպ կը ջանայ խորտակել Զէյթունի, Հաճնոյ, Սասնոյ եւ Շատախի ժողովուրդի մէջ դարերէ ի վեր գոյատեւած ազատասիրութեան ոգին:
 - Թուրքը չ'անդրադառնար, թէ Ռուսիոյ դիմաց միայն հայկական զօրաւոր պետութիւն մը կրնայ իրեն պատուար ըլլալ:

1878 – 1894

- Արտագաղթ դէպի Անդրկովկաս եւ Ամերիկա, մեծամասնութիւնը սակայն կը մնայ հողին կապուած:

ԺԵ. ՊԱՅՔԱՐԸ ԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ

- Հին Հայաստանի նոր երիտասարդութիւնն է որ կ'արթննայ :
- Պալքաններու օրինակը. ազատագրուած՝ կը յառաջդիմեն:
- Դժգոհութիւնները ծնունդ կու տան կոմիտէներու եւ կուսակցութեանց, պայմաններու բարելաւում, կը քարոզեն ինքնապաշտպանութիւն:

1885

- Վան. Մկրտիչ Փորթուկալեան, Մինաս Զերազ՝ Հայ դատի փաստաբանները. Արմենականություն: Խաղաղ գոյամարտ:

1887

- Ժընև, Մարո Վարդանեան-Նազարբեկեան, Հնչակեան կուսակցություն, Ալետիս Նազարբեկեան, Ռուբին Խանազատ, Յակոբ Մեղաուրեան, Շմալուն, Համբարձում Պոյաճեան, Ժիրայր, Միհրան Տամատեան:

1890

- Թիֆլիս՝ Հայ յեղափոխական դաշնակցություն, Քրիստափոր Միքայելեան, Սիմոն Զաւարեան, Ռոստոմ (Ստեփան Զօրեան), Յովհ. Լորիս Մելիքով, Կոստանդին Խատիսեան: «Դրօշակ»:
- Երկու յեղափոխական կուսակցություններն ալ չափաւոր պահանջներ կը դնեն. հայութեան բարելաւումը Օսմանեան կայսրութեան մէջ:
- Թուրքը դժգոհը յեղափոխականի տեղ կը դնէ. բողոքը՝ դաւադրութեան: Հայը կ'ուզէ ապրիլ խաղաղ, տէրը՝ տարրական իրաւունքներու: Բողոքի եւ պաշտպանութեան արդարագոյն շարժումն է հայունը:
- Բռնությունները կը բազմապատկուին:

1888

- Մուսա Բէկ քիւրտ ճիւղը պետութեանց պնդումով կը ձերբակալուի, թուրք դատարանը ազատ կ'արձակէ զայն:

1890

- Էրզրում զէնք փնտռելու պատրուակով եկեղեցին կը սրբապղծեն. պաշտպանող հայերէն՝ 20 նահատակ, 300 վիրաւոր:
- Աքսորներ, բանտ, կախաղան:
- Ինքնապաշտպանութիւն առաջին փորձեր, ձերբակալութիւններ եւ զանգուածային գնդակահարութիւն:

1893

- Հնչակեան կուսակցութիւնը ճնշելու համար՝ Մարգուանի դէպքերը. կ'այրուի ամերիկեան դպրոցը: Անգլիա կը միջամտէ:
- Կլատսթոնի հեռանալէն ետք, Համիտ կ'անցնի բնաջնջումի ծրագրի գործադրութեան:

1894 – 96 ՁԱՐԴԵՐԸ

1893

- Սասուն կը մերժէ ենթարկուիլ հարստահարութեանց, քիւրտին տուրք վճարել: Քիւրտները կը յարձակին. լեռնականները խիզախօրէն ետ կը մղեն զանոնք: Պետութիւնը զօրք կը դրկէ:

1894 օգոստոս.

- Կոտորած՝ իբր թէ թուրքին դէմ ըմբոստացում պատրուակելով:

1894 –1999

- 12 000 սասունցիներէն 3500 հոգի կը զոհուի:

1895

- Անգլիա, հակառակ ռուսական արգելքին, քննութեամբ կը հաստատէ թուրքին անիրաւութիւնը: Լորտ Ռոզըպերի բարենորոգութեանց ծրագիր մը կ'առաջարկէ եւ գործադրութիւնը 61-րդ յօդուածին:
- Հայոց պահանջներն էին՝
 - 1 Վեց հայ նահանգներու վերահաստատումը բնական սահմաններով:
 - 2 Իւրաքանչիւր նահանգի՝ պետութիւններու կողմէ ընդունուած կառավարիչ մը:
 - 3 Հարկերու արդար բաշխում:
 - 4 Արդարութեան բարեփոխում:
 - 5 Հայերու մասնակցութիւնը ոստիկանական, վարչական մարմիններու մէջ:
- Ռուսիոյ արտաքին գործոց նախարար իշխան Լոպանով կը հակառակի: Համիտ կը շարունակէ ջարդերը: Նահանգներու կղզիացում, ճամբորդութեանց արգելք, գրաքննութիւն, մզկիթներու բեմերէն ամբոխավարները կը կազմակերպեն ջարդերը: Զէնքեր կը բաժնուին ոչ քրիստոնեաներուն:

1895 սեպտեմբեր

- Պոլիս Հնչակեաններու ցոյց մը արեան մէջ կը խեղդուի:

1895 դեկտեմբեր

- Մեծ ջարդեր ամենուրեք: Ուրֆայի մէջ 3000 կին եւ երեխայ եկեղեցւոյ մէջ կ'այրեն:

1894 – 1896

- 150 000 ջարդուած, 110 000 չարչարուած նահատակ, բանի մը տասնեակ հազար՝ անօթութենէն եւ ցուտէն մեռած: 40 000 բռնի իսլամացած: 2500 գիւղեր կործանած: Կէս միլիոն հայեր կատարեալ թշուառութեան մէջ: 100 000 արտագաղթ Անդրկովկաս, Պալքանները եւ Ամերիկա: Այսպիսով 400 000 հոգի կը պակսին հայկ. նահանգներէն:
- Թուրքը նախ կը հերքէ, ապա կը խոստովանի, իբր թէ ընդհանուր ապստամբութիւն մը կանխելու համար եղան ջարդերը:
- Կլատսթոն կը վկայէ՝ «Եթէ ասիկա բան մը կը նշանակէ, յստակ է ուրեմն, որ հայերը, թէւ անգէն, կ'աշխատին պաշտպանել իրենց ինչքերը, իրենց լեռներն ու երեխաները:
- Արդարեւ, Շատախի, Զէյթունի, Վանի մէջ հայերը հերոսական դիմադրութեամբ կը մարտիրոսանան, մերժելով իսլամանալ: Վանի մէջ 800 հոգի 7 օր կը դիմադրեն: Թուրքը կ'ուզէ յանցանքը քիրտին վրայ նետել:
- Լորտ Սալսպրի կ'առաջարկէ որ մեծ պետութիւնները միջամտեն: Ռուսիա եւ Գերմանիա կը հակառակին: Կլատսթոն կ'առաջարկէ միայն Անգլիոյ միջամտութիւնը: Սալսպրի չի համարձակիր:
- Զարդերուն հետեւանքով ժողովուրդը մեծամասնութեամբ իր յոյսը կը դնէ Հ. Յ. Ղազնակցութեան վրայ եւ կը խտացնէ անոր շարքերը: Կը կազմակերպուին ինքնապաշտպանութեան եւ վրէժխնդրական բազմաթիւ արշաւանքներ Պարսկաստանէն մինչեւ Անդրկովկաս: Ազդային դիտակցութեան զարթօնք:
- Եւրոպա անտարբեր կը մնայ: Եւրոպական դրամազուխներ կ'օգտուին Թուրքիոյ նեխած վիճակէն, մեծ շահեր ապահովելով: Անհատներ են միայն, որ Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ եւ այլ երկիրներու մէջ կը բարձրացնեն բողոքի իրենց ձայնը՝ ի գուր:
- Ֆրանսա, Քրիստափորի կազմակերպութեամբ, կը հրատարակուի «Փրօ Արմենիա» թերթը, իր շուրջ հաւաքելով մտաւորական ընտրանի մը:

ՊԱՆՔ ՕԹՈՄԱՆԻ ԳՐԱՌՈՒՄԸ

1896

- Ջարդերը կը շարունակուին:
- Եւրոպայի միջամտութիւնը ստիպելու համար, 26 դաշնակցական տղաք, Բաբգէն Սիւնիի, Արմէն Գարոյի եւ Հրաչ Թիրիաքեանի առաջնորդութեամբ կը գրաւեն դրամատունը: Պիտի դուրս գան եթէ սուլթանը յօժարի գոհացում տալ մեր պահանջներուն եւ ընդունի միջազգային իրաւարարներու յանձնել հայկական հարցը, թէ ոչ պիտի պայթեցնեն: 14 ժամ կը դիմադրեն թրքական ամեն յարձակումի:
- Դուրս կու գան դեսպաններու եւ դրամատան տնօրէնին միջամտութեան խոստումին վրայ: 7000 զոհեր Պոլսոյ մէջ:
- Մեծ տէրութիւնները յուշագիր մը կը յղեն պարզապէս:
- Սակայն Ռուսիա կը մտահոգուի միջամտութենէն, ուստի սեւ Շովու նաւատորմիդը կը զինէ եւ Խրիմի մէջ զօրք կը հաւաքէ:
- Սուլթանը կը դադրեցնէ ջարդերը, անտեսելով սակայն մեր պահանջները. ոչ մէկ երաշխիք, որ դարձեալ պիտի չջարդէ:

ՖԵՏԱՅԱԿԱՆ ԳՈՐԾԸ

1902

- Ֆրանսական խորհրդարանին մէջ Տելքասէ կը հաստատէ. «Ճակատագրական է որ տեւաբար սպանդներու ենթակայ եւ առանձնօրէն կողոպտուած ժողովուրդ մը ի վերջոյ խորհի թէ որեւէ բան աւելի նախընտրելի է քան թէ նախճիրի մը մղձաւանջը»:
- Կը կազմուին հայդուկային խումբեր հայ ժողովուրդի ընտիր զաւակներէն: Անդրանիկ, Նիկոլ Դուման, Հրայր, Գէորգ Զաւուշ, Մուրատ, Սերոբ եւ ուրիշներ՝ առաւելական հերոսներ: Նաեւ հազարաւոր խոնարի հերոսներ:
- «Մահ կամ Ազատութիւն», աւելի յաճախ՝ առաջինը:

1897

- Խանասորի պատժական արշավը - Վարդան, Իշխան, Դուման, Կարօ:

1899

- Խաստուրի կռիւը - Սերոբ Աղբիր 12 կտրիճներով ընդդէմ 1500-ի:

1901

- Առաքելոց Վանքի կռիւը - Անդրանիկ (19 օր):

1904

- Սասնոյ Բ. ապստամբութիւնը - Անդրանիկ, Հրայր, Դժոխք, Գէորգ, Քեռի, Սուրատ, Սեպուհ, Վահան, Սմբատ, Կայծակ Առաքել, Գայլ Վահան:
- 2 ամիս կը դիմադրեն թրքական 13 վաշտերու
- Նկատելի է հոգեփոխութիւնը ժողովուրդին մէջ: Թօթափում ստրկամտութեան:
- Հայկական աւանդական քաջութիւնը. հայ բանակի մը նախաքայլերը:
- Հայկական նահանգները կը կազմակերպուին. Սասուն, Վասպուրական: Դպրոց, դատարան: Զինավարժութիւն, Արամ, Ռուբէն, Իշխան, Կոմս եւ ուրիշներ:
- Բազմաթիւ ահաբեկումներ հայ դաւաճաններու եւ օտար դահիճներու:

ՀԱՅՈՑ ՕԺԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՐԱՆԵՐՈՒ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ

- Տկարին կողքին՝ անիրաւ զօրաւորին դէմ:

1906 – 1907

- Պարսկական յեղափոխութեան եւ նոր վարչակարգի պաշտպանութեան աջակցութիւն. Եփրեմ Խան, որ կը փշրէ հակայեղափոխութեան դիմադրութիւնը եւ կը զոհուի: Քեռի, Խեչօ, կամաւորներ:

ԺԶ. ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՄԻԱՆ

ՀԱՅՈՑ ԴԷՍ

- Ռուսիա, Եւրոպա մեկուսացած, կը կառավարուի ոստիկանական դիւանակալութեամբ, զեղծումներով ու կաշառքով:

1881

- Ալեքս Գ. ցար, բռնի ժուսացման քաղաքականութիւն ոչ-ռուս, ոչ- օրթոտոքս քրիստոնեաներուն հանդէպ - (ֆին, լեհ, հայ եւ այլն):
- Ընդհակառակն, հանդուրժողութիւն Ասիոյ ոչ-քրիստոնեաներուն հանդէպ:
- Նիկոլ Ա.-ի կողմէ՝ 1836-ին հայ եկեղեցւոյ շնորհուած սահմանադրութիւնը կը բռնաբարուի:

1884

- Ճնշում դպրոցներուն վրայ:
- Կը զօրացնեն թաթար ու քիւրտ տարրերը:

1890

- Կուկունեանի արշաւանքի խումբը ժուսական սահմանին վրայ կը բռնուի:

1894 – 1896

- Զարդերէն Անդրկովկաս ապաստանած 60 000 հայերուն կը մերժուի հողամշակութեան իրաւունք:
- Բանակէն կը հեռացուին աչքի ինկող հայ զինուորականները:
- Կը քաջալերուին դաւաճանները, զրպարտիչները, ազգը հալածողները:
- Հալածանք հայ յեղափոխականներու, ծերբակալութիւններ, բանտ:
- Երկու հայատեաց ճիւղներ՝ իշխան Կալիցին եւ նահանգապետ Նակաշիժէ Կովկասի մէջ:

1897

- Կը փակուին 100 հայկական դպրոցներ, մշակութային հաստատութիւններ, թերթեր:

1903

- Եկեղեցւոյ ինչքերու բռնագրաւում, հայը կ'ընդդիմանայ, Դաշնակցութիւնը (Ռոստոմ) կողքին կը կանգնի Խրիմեանի, որ կը մերժէ ինչքերը յանձնել: Նոյնիսկ անաստուածի համբաւով մարտիկներ կը զոհուին Եկեղեցւոյ դռան առջեւ:
- Քաղքենի, ռուսացած հայը կ'արթննայ:

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

1905

- Ռուսիա տկարացած՝ ռուս եւ ճափոն պատերազմէն եւ ներքին յեղափոխական խմորումներէն, կ'որոշէ ջարդել հայերը: Կը հրահրէ թաթարը:
- Պաքու - կոտորած եւ թալան:
- Հայը, համախմբուելով Հ. Յ. Դաշնակցութեան շուրջ, կը դիմէ ինքնապաշտպանութեան:
- Թիֆլիս՝ Արմէն Գարօ 500 կամաւորներով նահանջի կը մատնէ 1500 թաթար:
- Պաքու՝ Նիկոլ Ղուման:
- Երեւան՝ Ղոս եւ Խեչօ
- Շուշի՝ Վարդան կը ղեկավարէ կռիւները:
- Ռուս ոստիկանութիւնը կը միջամտէ երբ որ թաթարները կը պարտուին:
- Նակաշիճէ կ'ահաբեկուի Դրոյի կողմէ:

1905

- Կը պայթի ռուս յեղափոխութիւնը, ատեն մը կը մեղմանայ ճնշումը: Ռուս մտաւորականութիւնը ընդվզած էր հայուն, ֆինին, հրեային հանդէպ թշնամանքէն: Վորոնձով-Տաշքով Անդրկովկաս գալով կը փորձէ աւելի հայանպաստ քաղաքականութիւն մը:
- Եկեղեցւոյ կալուածները կը վերադարձուին:

1908

- Կրկին ռուսացման քաղաքականութիւն: Կը ձերբակալուին 2000-է աւելի հայեր, (մտաւորականներ եւ այլն): Ցուցական դատավարութիւն մը դաշնակցական վարիչներու: Բանտարկութիւններ, աքսոր:

ԺԷ. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐՈՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ Ա. ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

- Սուլթան Համիտի բռնակալության դեմ կը կազմաւորուի ընդդիմադիր ուժ մը՝ Երիտասարդ թուրքերու կողմէ «Միութիւն եւ յառաջդիմութիւն» անունով:

1908

- Դաշնակցութեան օժանդակութեամբ կը տապալեն միահեծան բռնապետութիւնը, կը ստիպեն սուլթանին որ սահմանադրութիւն հռչակէ:

1909

- Երբ սուլթանը կը փորձէ հակազդել, դարձեալ հայկական աջակցութեամբ, զինք գահընկեց կ'ընեն:
- Նոյն ատեն սակայն, Կիլիկիոյ մէջ 15 000 հայերու ջարդ:
- Հայերը կը հաւատան թէ նորոգուած եւ զօրացած Օսմանեան կայսրութիւն մը, դաշնակցային հիմքի վրայ, պիտի կարենայ դիմադրել Գերմանիոյ եւ Ռուսիոյ ծաւալապաշտութեան:
- Դեկավարութեան գլուխ կու գան Էնվէր, Ճեմալ, Թալաաթ հրէշները: Սերտ գործակցութիւն՝ Գերմանիոյ հետ:
- Դարձեալ կ'որդեգրեն բռնի թրջացման քաղաքականութիւնը Լիբանանի տիրոգիները, Պաղեստին եւ Իրաք կ'ապստամբին 1910-ին:
- Եմէն՝ 1911-ին, Մակեդոնիա՝ 1911-12-ին:

1912

- Պալքանեան պատերազմ. հայը հաւատարիմ զինուոր թուրք բանակին մէջ: Պարտութիւն: Կը կորսնցնեն Մակեդոնիա եւ Թրակիա:
- Վախնալով, որ օր մը նոյն բախտը կը սպասէ իրենց Հայաստանի մէջ եւ այլուր՝ կ'որոշեն բնաջնջել հայերը եւ յոյները, թրջացնել քիւրտն ու արաբը:

- Հայերուն կը մնայ դարձեալ պահանջել 61-րդ յօդուածի բարենորոգումները:

1914 փետրուար

- Ռուսիոյ ազատական տարրերու ճնշումով, Անգլիոյ եւ Ֆրանսայի աջակցութեամբ, Գերմանիոյ ալ համամտութեամբ՝ կը ստորագրուի ծրագիր մը՝ հայկական նահանգներու վարչական գործերուն վրայ հսկելու կոչուած քննիչներու նշանակումով փոքր պետութեանց ներկայացուցիչներէն, եւ երաշխաւորութեամբ, որ հայերէ կազմուին վարչական եւ ոստիկանական մարմինները:
- Թուրքիա կը զիջի: Հազիւ հոլանտացի եւ նորվեկիացի քննիչները կու գան, կը պայթի աշխարհամարտը:
- Հակառակ ժուսացման վտանգին, հայը իր բախտը կապուած կը տեսնէ Ռուսիոյ:

1914

- 4 100 000 հայեր աշխարհի վրայ. 2 100 000՝ Օսմանեան կայսրութեան մէջ, 1 700 000՝ Ռուսիա, 100 000՝ Պարսկաստան, 200 000՝ այլուր: Ռուսահայաստանի մէջ, Էրզրումի եւ Պիթլիսի նահանգներուն մէջ՝ մեծամասնութիւն: Ուստի
- 2 700 000 հայեր կ'ապրին պատմական Հայաստանի սահմաններուն մէջ: Երկու հայահոծ կեդրոններ՝ Պոլիս եւ Թիֆլիս (ինչպէս նախապէս՝ Պաքու եւ Իզմիր): Երկրի մէջ՝ Էրզրում, Վան, Երեւան, Ալեքսանդրապոլ:
- Ազատ Հայաստան մը Արեւելքը կրթելու առաքելութիւն մը կրնայ ունենալ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԵՈՅԹՆԵՐ

- Անդրկովկասը ժուս տիրապետութեան տակ տնտեսական վերելք կ'ունենայ:
- Անհատական նախաձեռնութեան զարկ կը տրուի:
- Երկրագործութիւնը, ընդհակառակը, կը խափանուի վարչակարգին պատճառաւ: Բայց հաղորդակցութեան ճամբաներու շինութիւնը աւելի լաւ պայմաններ կը ստեղծէ հողագործութեան եւ արտածումի համար: Արմտիքը՝ տեղական սպառումի: Բամպակ, արջառ, գինի, մետաքս եւ պտուղներ կ'արտածուին:

- Նաւային ճարտարարուեստ, հանքային եւ սննդանիւթերու ճարտարարուեստ: Պաքու կը զարգանայ շնորհիւ հայերուն, Ռուսիոյ առաջին քարիւղի կեդրոնը:
- Առետուրի յառաջդիմութիւն: Հայերը ռուսական շուկաներու մէջ՝ Արեւելքի ապրանքներով, Արեւելքի մէջ՝ Ռուսիոյ:
- Թուրքեստանի մէջ հայը կ'ըլլայ ռուս առետուրի տարածիչը:
- Անդրկովկասի վերելքը՝ շնորհիւ հայու աշխատանքին եւ նախածեմնող ոգիին: Հայաստանէն աւելի օգտուողը՝ Պաթում, Պաքու, Թիֆլիս: Երեւան կը կորսնցնէ վաճառականական կարեւորութիւնը:
- Արեւմտահայաստանը թէեւ ո'չ նոյն չափի, բայց եւ այնպէս կը զարգանայ շնորհիւ հայուն աշխատասիրութեան: Ամենէն անտանելին՝ հայը երկրին միակ գործօն ուժն է:
- Քանի մը տարուան խաղաղութեան մէջ երկրագործութիւնը հսկայաքայլ կը յառաջդիմէ:
- Համագործակցութեան սկզբունքը Եւրոպայէն եւ Ռուսիայէն շատ առաջ հայկական գիւղերու մէջ կը կիրարկուի:
- Արհեստներ եւ ճարտարարուեստներ՝ հայոց ձեռքը:
- Վան եւ Շատախ 3000 հոգի հիւսուածեղէնի գործով կը զբաղին:
- Վան, Մուշ, Պիթլիս՝ գորգեր:
- Էրզրում՝ սննդական արտադրութիւններ, կաշի, մետաղներ, գէնքեր, սուրեր, երկաթագործութիւն եւ այլն:
- Վան եւ Էրզրում՝ ոսկերչութիւն եւ գոհարեղէններու արհեստագործութիւն:

ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ - ԱՐԵՒՍՏԵԱՆ ՃԱԿԱՏ

- «Ազատամարտ», «Մեհեան» եւ այլ թերթեր:
- Արեւմտահայերէնը կատարելութեան կը հասնի:
- Գեղեցիկի պաշտամունք եւ հայկականութեան փնտռտուք:
- Արուեստագէտ քերթողներ, յեղափոխաշունչ եւ գաղափարական գրողներ - Մեծարենց, Վարուժան, Սիամանթօ, Թէքէեան:

- Գաւառական գրականութիւն - Զարդարեան, Յարութիւնեան:
- Թատրոն՝ Շանթ, Երզիծանք՝ Ե. Օտեան, քննադատութիւն՝ Օշական:
- Կին գրողներ - Զապէլ Եսայեան:
- Պատմական ուսումնասիրութիւններ՝ Եղիշէ արք. Դուրեան:

ՉՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ - ԱՐԵՎԵԼԵԱՆ ՃԱԿԱՏ

- «Մուրճ» ազգագրական հանդէս, «Նոր Հոսանք», «Գործ» թերթերը:
- Արեւելահայերէնը՝ գեղեցիկ եւ համեղ:
- Թումանեան, Իսահակեան, Տէրեան՝ բանաստեղծները:
- Շիրվանզադէ՝ թատերագիր:
- Ահարոնեան՝ յեղափոխութեան երգիչը:

ԺԸ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ

ՀԱՄԱԹՐՔՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱԹՈՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

- Թուրքերուն նպատակն է թրքացնել ոչ-թուրք տարրը եւ Օսմ. կայսրութիւնը տարածել Վոսփորէն Կեդրոնական Ասիա:
- Այս նպատակին հասնելու համար պէտք է յաղթեն Ռուսիոյ, ունենան Գերմանիոյ աջակցութիւնը: Հայը խոչընդոտ մըն է:
- Կ'առաջարկուի հայերուն Ռուսիոյ դէմ ապստամբիլ: ՀՅԴ-ը մերժեց, հայը իր պարտականութիւնը կը կատարէ երկուքին հանդէպ:

1914

- Հոկտեմբերին թուրքը պատերազմի կը մտնէ Գերմանիոյ կողքին:

1915

- Կը սկսի հայութեան բնաջնջումը, Թալաաթի ղեկավարութեամբ եւ «Միութիւն եւ յառաջդիմութիւն» կուսակցութեան կազմակերպութեամբ:

1915 ապրիլ 24

- Ձերբակալություն, աքսոր եւ սպանություն պոլսահայ ընտրանիին:
- Ոչնչացում հայ զինուորներու եւ սպաներու որոնք հաւատարմութեամբ թրք. բանակին ծառայած են կովկասեան ճակատին վրայ:
- Ժողովուրդը կը տարագրուի Միջագետքի անապատները: Կոտորած, յափշտակութիւն կիներու եւ աղջիկներու:
- Թուրքիոյ 1 800 000 հայերէն 1 000 000-էն⁸ աւելին նահատակուեցան:
- Պատիժ այն թուրքերուն որոնք կ'ընդդիմանան:
- Յուսահատ, այլեւ հերոսական դիմադրութիւններ Վանի, Շատախի, Սասունի, Շապին Գարահիսարի, Ուրֆայի եւ Մուսա լեռան շրջաններուն մէջ:

1915

- Մայիսին, Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսիա Լոնտոնի մէջ յայտարարութեամբ մը կը դատապարտեն Օսմանեան կառավարութիւնը, բայց պատերազմը վերջանալէն ետք իւրաքանչիւրը հետամուտ կ'ըլլայ ի շահ իրեն բան մը կորզելու Թուրքիայէն:

1920 – 1922

- Հայ վրիժառու բազուկը (Թեհլիրեան, Թուրաքեան, Շիրակեան, Երկանեան, Ծաղիկեան եւ ուրիշներ), իրարու ետեւէ կը տապալէ ջարդարարները:
- Հայոց եղեռնը ցեղասպանութեան առաջին օրինակն է, որ պիտի կրկնուի Բ. աշխարհամարտին, Գերմանիոյ կողմէ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՑԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

- 50 000 հայեր կ'իյնան դաշնակիցներու, ապա հայկական դրօշներու տակ, պատերազմի ընթացքին՝ հայութեան եւ հայրենիքի փրկութեան համար:
- Թրքական բանակի 60 000 հայ զինուորները կը բնաջնջուին:
- Ռուսական բանակին մէջ 180 000 հայեր, մեծամասնութիւնը՝ կովկասեան 3 զօրաբաժիններու մէջ.

⁸ Ներկայիս այս թիւերը վերանայուած են: Ցեղասպանութեան զոհերու թիւը 1,5 միլիոն կը համարուի:

առաջին՝ կովկասեան ճակատ, երկրորդ եւ երրորդ՝ աստրո-գերման ճակատ: Անոնք մեծապէս կը նպաստեն դաշնակիցներու յաղթանակին կը ծախողեցնեն թրքական յարձակումը Կովկասի վրայ:

- Նոյնիսկ Ֆրանսայի քանի մը հազարոց գաղութն հարիրաւոր զինուորներ կու գան:
- Ռուսահայերէ, թրքահայերէ եւ ջարդերէն վերապրողներէն 10 000 կամաւորներ, 6 գունդերով՝ օգնութեան համար Թրքահայաստանի ժողովուրդին փրկութեան եւ երկրի գրաւումին:

1914

- Սարիղամիշի ճակատամարտը, Դ. գունդ՝ Քեռի (զոհուեցաւ):
- Պայագիտի եւ Ալաշկերտի ճակատամարտները, Բ. Գունդ՝ Դրօ, Արմէն Գարօ, Գ. գունդ՝ Համազասպ:
- Տիլմանի ճակատամարտը, Ա. Գունդ՝ Անդրանիկ:

1915

- Վանի ազատագրութեան՝ Բ. Գ. եւ Դ. գունդեր:
- Մանազկերտ, Պիթլիս, Քիւրտիստան եւայլն:

1917

- Գաղթական հայերէն, վերապրողներէն եւ Ամերիկայէն կամաւորներով՝ Հայկական լէգէոնը, ֆրանսական դրօշի տակ, թրքական ճակատի փլուզումով՝ կ'ապահովէ Պաղեստինի եւ Սուրիոյ յաղթանակները:
- Ուրիշ գունդ մը, Իրանի հարաւը, անգլիական դրօշի տակ, կը պաշտպանէ շրջանը գերմանական թափանցումին դէմ:
- Անհայրենիք հայը բանակ կ'ունենայ:

ԺԹ. ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ Կ'ԱՌՆԷ

1917 – 1918

Անդրկովկասի պաշտպանութիւնը

- Փետրուարեան յեղափոխութիւն, Ռուսիոյ մէջ, ազատական եւ ընկերվար տարրերու կողմէ:
- Ինքնավարութիւն ֆիներուն, լեհերուն եւ հայերուն:

Ազատագրուած Թրքահայաստանը կը յանձնեն հայկական իշխանութեան:

- Հոկտեմբերեան համայնավար յեղափոխութիւն:
- Անդրկովկաս կը մերժէ համայնավարութեան յարիլ: Կը կազմուի Անդրկովկասեան կառավարութիւն եւ խորհրդարան:
- Ռուս զինուորները Լենինի կոչով կը լքեն թրքական ճակատները եւ տուն կը վերադառնան: Վրացին եւ ազրպէյճանցին կը մերժեն կռուիլ թուրքին դէմ: Հայրենիքը պաշտպանող կը մնայ հայը մինակը:

1918

- Յունուարին Լենին Թրքահայաստանի անկախութիւնը կը հռչակէ: Մարտին Պրիստ Լիդովսքիի մէջ տեղի կու տայ Գերմանիոյ պայմաններուն առջեւ եւ Թուրքիոյ կը ձգէ Թրքահայաստանը: Առաւել՝ Կարսն ու Արտահանը:
- Ռուս բանակի հայ մնացորդացէն 35 000-նոց բանակ մը կը կազմուի կասեցնելու համար թրքական յառաջխաղացքը:
- ԺԴ. դարէն ի վեր հայկական դրօշի տակ առաջին բանակը:
- Զօր. Նազարբեկեան, զօր. Անդրանիկ, գնդ. Մորելի:
- 1918-ի սկիզբը կը գրաւեն Թրքահայաստանի ճակատը: 400 քմ. տարածութեան վրայ պիտի պաշտպանուի Թրքահայաստանը եւ Անդրկովկասը:
- Փետրուարէն սեպտեմբեր՝ անհաւասար կռիւ, առանձին:
- Փետրուարին էրզնճանը, մարտին Էրզրումը կը պաշտպանուին:
- Բայց հսկայ թուրք բանակին առջեւ՝ նահանջ: Կատաղի կռիւներ: Ապրիլին Կարսը կ'իյնայ:
- Մահու կենաց պայքար: Գերագոյն ճիգի կոչը Նազարբեկեանի կողմէ: Ամբողջ ժողովուրդը ոտքի կ'ելլէ:
- Յաղթանակ՝ Ղարաքիլիսէ (Նազարբեկեան), Սարտարապատ (Փերումեան, Սիլիկեան), Բաշ Ապարան (Դրօ):

1918 մայիս 28

- Հայաստանի Հանրապետութեան հռչակում:
- Յունիս 4՝ Պաթումի դաշնագիր, Թուրքիա կը ճանչնայ հայկական նոր պետութիւնը, Երեւանի եւ Սեւանի շրջանին մէջ:
- Մինչեւ նոյեմբեր՝ ֆրանսական ճակատի յաղթանակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ (1918-1920)
THE FIRST REPUBLIC OF ARMENIA (1918-1920)



Զօր. Անդրանիկ կը յաջողի Զանգեզուրի մէջ
երկարածգել դիմադրութիւնը:

- Իրանի հիւսիսը, ասորիներու հետ դիմադրութիւն մինչեւ յուլիս՝ ի վերջոյ միանալու համար անգլիական ուժերուն:
- Պաքուի մէջ, աստրօ-գերման ճակատէն վերադարձած ռուս բանակի հայ սպաներն ու զինուորները, Ռոստոմի ղեկավարութեամբ, կը պաշտպանեն քաղաքը, մինչեւ սեպտեմբեր՝ արգիլելով որ նաւթը անցնի Գերմանիոյ ձեռքը:
- Հոկտեմբեր 30՝ դաշնակիցներու յաղթանակը: Նոյեմբեր 11՝ զինադադար՝ Գերմանիոյ հետ:
- Հայերը մեծ նպաստ բերած էին. կ'ակնկալէին որ գնահատուի իրենց զոհողութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԵՐՊՈՐԱՆՔ Կ'ՍՈՆԷ

- Հայկական հրաշքը. մէկ միլիոն կը մեռնի, որ ուրիշ միլիոն մը ապրի:
- 10 000 քառ. քմ. մէկ միլիոն բնակիչներով:
Գաղթականներով լեցուած:
- «Թաղել մեռելները, պաշտպանել վերապրողները, պատրաստել ապագան»:
- Արամ Մանուկեանի մղումով կը սկսի դառնալ պետութեան մեքենան:
- Սովն ու թիւֆիւսը տարածուած են:

1919

- Գարնան Ամերիկայէն ցորեն կու գայ:
- Կը կազմակերպուին կառավարութիւնն ու բանակը:
- Կը հիմնուի համալսարանը: Նիկոլ Աղբալեան:
- Կը դրուի երկրի տնտեսական հիմքը:
- Թուրքիայէն ալ Ալեքսանդրապոլն ու Կարսը ետ կ'առնուին: Ազրայէժանէն՝ Ղարաբաղը, Վրաստանէն՝ Բորչալուն եւ Ախալքալաքը:
- Երկրին տարածութիւնը կը հասնի 45 000 քառ. քմ-ի :
- Նախիջեւանի թաթարները թուրքիոյ կողմէն զինուած դժուարութիւններ կը յարուցանէին: Ռուբէն կը մաքրագործէ երկիրը:
- Քաջագունի, Խատիսեան, Օհանջանեան, Վրացեան կը ստանձնեն վարչապետի պաշտօնը:

- Վերահաստատում՝ կարգի եւ ապահովութեան:
- Վերաշինում հաղորդակցութեան ճամբաներու: Զարկ՝ երկրագործութեան:

1919 մայիս 28

- Հայաստանի Հանրապետութեան եւ Թրքահայաստանի միութիւնը կը հռչակուի:

1920

- Զգալի բարելաւում տնտեսական կացութեան՝ շնորհիւ հայ գիւղացիի յամառ ճիգերուն:
- Գաղութներէն նիւթական օգնութիւն եւ կամաւորներ:

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՇՏԱԿԻՑՆԵՐՈՒՆ ՍՈՋԵՒ

- Հայաստան, որ դաշնակիցներու կողքին կռուած է, կը լքուի անոնցմէ:

1918 հոկտեմբեր 30

- Մուտրոսի զինադադարը չ'ստիպեր որ Թուրքիա իր բանակը քաշէ Արեւմտահայաստանէն:
- Փարիզի խաղաղութեան վեհաժողովին «պատերազմիկ» տէրութիւններու կարգին Հայաստան չէր հրաւիրուած:
- Ահարոնեանի գլխաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը եւ Պօղոս Նուպարի գլխաւորութեամբ՝ Թրքահայաստանի եւ գաղութներու պատուիրակութիւնը կը ներկայանան ժողովին. կը պահանջուին Թրքահայաստանի սահմանակից նահանգներու կցումը Հայաստանի:
- Պետութիւնները կ'ուզեն Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը պահել՝ զայն շահագործելու համար:
- Նախագահ Ուիլսըն Ամերիկեան հովանաւորութեան տակ կ'ուզէ առնել Հայաստանը: Ծերակոյտը կ'ընդդիմանայ:
- Պահ մը կը կարծուի Կիլիկիոյ մէջ հայկական ինքնավար պետութիւն մը հիմնել Ֆրանսայի հովանիին ներքեւ: Վերապրող հայեր Կիլիկիա կը վերադառնան: Ֆրանսա կը քաշուի:

1920

- Յունուարի վերջը, Հայաստանի կառավարութիւնը իրողապէս կը ճանչցուի Դաշնակիցներուն կողմէ:

1920

- Ապրիլին Սան Ռեմոյի խորհրդաժողով. Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ վարչապետները կը սկսին ուսումնասիրել հաշտութեան պայմանները, Թուրքիոյ հետ կ'որոշեն Հայաստանի կցել Տրապիզոն, Էրզրում, Վան եւ Պիթիս:

1920 օգոստոս 20

- Սեւրի խորհրդաժողով, դաշնակիցներու եւ Թուրքիոյ հաշտութեան դաշնագիրը: Հայաստան իրաւապէս կը ձանջցուի: Հայոց կողմէ կը ստորագրեն Ահարոնեան եւ Պօղոս Նուպար: Ուիլսոնի կը յանձնուի սահմանագծումը: 160 000 քառ. քմ:

ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐԷ ՊԱՏԵՐԱԳՍԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԱՅՆԱՅՈՒՄԸ

1920 սեպտեմբեր

- Յարձակում Հայաստանի վրայ:
- Սովետները կը գրաւեն Պաքուն եւ Ագրպէձանը, Հայաստանի կռնակէն կը սպառնան գրաւելու Ղարաբաղն ու Զանգեզուրը:
- Թուրք եւ ռուս զինակցութիւն:
- Հոկտեմբեր 30` խիզախ կռիւներէ ետք Կարսը կը յանձնուի: Նոյեմբեր 7-ին` Ալեքսանդրապոլ: Զուջուրի դիրքին վրայ գերագոյն կռիւ մը եւ Երեւանի յաղթական պաշտպանողականը:

1920 դեկտեմբեր 2

- Ալեքսանդրապոլի մէջ Հայաստանի Հանրապետութիւնը կը ստիպուի ընդունիլ Անգարայի կառավարութեան ծանր պայմանները:
- Հայաստանի կը մնայ 30 000 քառ. քմ` սովետականացած:

1921 փետրուար 18

- Փետրուարեան ապստամբութիւնը:
- Նոյնիսկ Ալեքսանդրապոլի ծանր պայմանները չեն յարգուիր, սովետները հայկական հողեր կը բաժնեն Թուրքիոյ եւ Ագրպէձանի, կը ձերբակալեն, կը

բանտարկեն կամ կ'աքսորեն ու կը գնդակահարեն հայկական բանակի պետերը եւ դաշնակցական գործիչները:

- Օգնութիւն բերելու փոխարէն կը կողոպտեն ու կը թալանեն հայ գիւղերը: Հայ ընտանիքի սրբութիւնը կ'արատաւորեն:
- Գիւղացիական եւ բանուորական համաժողովրդային ապստամբութիւն՝ փետրուար 18-ին:
- Դաշնակցութիւնը տէր կը կանգնի ապստամբութեան. կը կազմուի Հայրենիքի փրկութեան կոմիտէն՝ Ս. Վրացեանի նախագահութեամբ:
- Կը փրկուին մտաւորականներն ու գործիչները:
- Երկիրը ինքնապաշտպանութեան կը դիմէ բոլշեւիկեան յարձակումներուն դէմ:
- Հայաստանի անկախութիւնը կը շարունակուի մինչեւ ապրիլ 9:
- Պատմութեան մէջ այս առաջին ըմբոստացումն էր սովետներուն դէմ: Երբոր կը վերադառնան, կը ստիպուին հաշուի առնել հայ ժողովուրդի արժանապատուութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ` ԾԱԽՈՒ

1921 փետրուար 12 – մարտ 13

- Լոնտոնի խորհրդաժողով:
- Անգլիա, Ֆրանսա եւ Իտալիա Թուրքիոյ հետ իրենց բարեկամութիւնը կը վերահաստատեն: Անկախ Հայաստանը «Ազգային օձախի» մը կը վերածուի, եւ այդ անգամ կը մերժուի թուրքերուն կողմէ: Անգլիա սովետներուն կը խոստանայ չօգնել հայերուն:

1921 - Մարտ 16

- Մոսկուայի դաշնագիր:
- Սեւրը կ'որացուի թուրքին եւ ռուսին կողմէ: Կարսն ու Արտահանը՝ Թուրքիոյ, Նախիջեւանը՝ Ազրպէյճանի:

1921 հոկտեմբեր 13

- Կարսի դաշնագիր:
- Մոսկուայի դաշնագրին պայմանները կը պարտադրուին Հայաստանի՝ Ռուսիոյ եւ Թուրքիոյ կողմէ:

- Ետքը Ղարաբաղն ալ կը ծգուի Ազրպէյճանի:

1923 յուլիս 24

- Լոզանի դաշնագիր.
- Մեծ պետութիւնները կ'անտեսեն Սեւրը, կը մոռնան Հայաստանը:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ` 1918–2024

**(հիմնուած առաւելաբար «Հայոց պատմութիւն - 12»
դասագիրքին վրայ)**

- 1918 մայիս 28 – Հայաստանի Հանրապետութեան հռչակումը,
հայկական անկախ պետականութեան վերականգնումը:
- 1918 յունիս 4 – Առաջին աշխարհամարտի Կովկասեան
ճակատում թուրք-հայկական պատերազմի աւարտը,
Պաթումի հաշտութեան պայմանագրի ստորագրումը:
- 1918 յունիս – սեպտեմբեր 15 – Պաքուի հայութեան հերոսական
ինքնապաշտպանութիւնը:
- 1918 յունիս 7 – 3. Քաջազնունիի ընտրուիլը կառավարութեան
նախագահ (վարչապետ):
- 1918 յուլիս 19 – ՀՀ կառավարութեան եւ Հայոց կեդրոնական
ազգային խորհուրդի ժամանումը Երեւան
- 1918 յուլիս 22 – 26 – Արցախահայութեան առաջին
համագումարը Շուշիի մէջ:
- 1918 օգոստոս 1 – Հայաստանի խորհուրդի առաջին նիստը:
- 1918 սեպտեմբեր 19 – Արարայի ճակատամարտը:
- 1918 նոյեմբեր – 1919 յունիս – ՀՅԴ-ՀԺԿ կուալիցիոն
(միաւորեալ) կառավարութիւնը:
- 1918 դեկտեմբեր – Վրաց-հայկական 20-օրեայ պատերազմը:
- 1919 յունուար 9 – 17 – Հայ-վրացական հաշտութեան
համաձայնութիւնը Թիֆլիսի մէջ:

- 1919 փետրուար 6 – 13 – Արեւմտահայերու երկրորդ համագումարը Երեւանի մէջ:
- 1919 փետրուար 12 – Հայկական երկու պատուիրակութիւններու համատեղ յուշագիրի ստորագրութիւնը Փարիզի մէջ:
- 1919 փետրուար 24 – ապրիլ 22 – Հայոց ազգային համագումարը Փարիզի մէջ:
- 1919 մայիս 16 – ՀՀ մէջ համալսարան հիմնելու որոշումի ընդունումը:
- 1919 մայիս 28 – «Միացեալ Հայաստանի անկախութեան հռչակագրի» ստորագրումը եւ հռչակումը:
- 1919 յունիս 21 – 23 – ՀՀ խորհրդարանի առաջին ընտրութիւնները:
- 1919 սեպտեմբեր – նոյեմբեր – ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի գումարումը:
- 1919 դեկտեմբեր 26 – Պետական լեզուի մասին ՀՀ օրէնքի ընդունումը:
- 1920 յունուար 19 – Հայաստանի կառավարութեան de facto (իրողապէս) ճանաչումը ԱՄՆ-ի, Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Ճափոնի ղեկավարներու Փարիզեան վեհաժողովի նիստին:
- 1920 յունուար 31 – Ալեքսանդրապոլի համալսարանի հանդիսաւոր բացումը: (1920 յունիսին փոխադրուեցաւ Երեւան):
- 1920 Հայաստանի կոմունիստական կուսակցութեան ծեւաւորումը:
- 1920 ապրիլ 19 – 26 – Սան Ռեմոյի խորհրդաժողովը:
- 1920 ապրիլ 23 – ՀՀ-ի de facto (իրողապէս) ճանաչումը ԱՄՆ-ի կառավարութեան կողմէ:
- 1920 ապրիլ 25 – Ղարաբաղի հռչակումը որպէս ՀՀ անբաժանելի մաս:
- 1920 մայիս 10 – Հայ բոլշեւիկներու մայիսեան ապստամբութեան սկիզբը:
- 1920 մայիս – ՀՀ վարչատարածքային նոր բաժանումը (4 նահանգ):
- 1920 յուլիս 23 – Զինանշանի մասին ՀՀ օրէնքի հաստատումը:
- 1920 օգոստոս 4 – Ինքնավար Կիլիկիայի հռչակումը Ատանայի մէջ:

- 1920 օգոստոս 10 – Սեւրի պայմանագրի ստորագրումը:
- 1920 օգոստոս 10 – ՌՍԴԽՀ-ի եւ ՀՀ-ի միջեւ համաձայնագրի ստորագրութիւնը Թիֆլիսի մէջ:
- 1920 սեպտեմբեր 1 – 8 – Արեւելքի ժողովուրդներու առաջին համագումարը Պաքուի մէջ:
- 1920 սեպտեմբեր 23 – նոյեմբերի 18 – Թուրք-հայկական պատերազմը:
- 1920 հոկտեմբեր 30 – Կարսի գրաւումը թուրքերու կողմէ:
- 1920 նոյեմբեր 23 – ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի իրավարար որոշումը հայ-թուրքական սահմանագծի վերաբերեալ:
- 1920 նոյեմբեր 24 – ՀՀ վերջին 4-րդ կառավարութեան՝ ՀՅԴ-էսէններ կուալիցիոն (միաւորեալ) կազմի հաստատումը խորհրդարանին մէջ:
- 1920 նոյեմբեր 29 – Ռազմյեղկոմի մուտքը Քարւանտարա (Իջեւան) եւ խորհրդայնացումի մասին յայտարարութիւնը:
- 1920 նոյեմբեր 30 – Ազրպէյճանի յեղկոմի Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը խորհրդային Հայաստանի Հանրապետութեան մաս ճանաչելու յայտարարութիւնը:
- 1920 դեկտեմբեր 2 – Երեւանի համաձայնագրի ստորագրութիւնը եւ Հայաստանի խորհրդայնացումը:
- 1920 դեկտեմբեր 8 – Հայյեղկոմի «Պարենային մթերքներու եւ այլ նիւթերու յայտնաբերումի մասին» հրամանի հրապարակումը:
- 1920 դեկտեմբեր 25 – Համազանգեզուրեան առաջին համագումարը Տաթեւի վանքին մէջ: «Ինքնավար Սիւնիքի» հռչակումը:
- 1920 դեկտեմբեր – 1921 թ. փետրուար – Ռազմական կոմունիզմի իրականացումը Հայաստանի մէջ:
- 1921 փետրուար 18 – ապրիլի 2 – Փետրուարեան ապստամբութիւնը:
- 1921 մարտ – 1922 յուլիս – Հայոց ցեղասպանութեան պատասխանատուներու հատուցման «Նեմեսիս» ծրագրի իրագործումը հայ վրիժառուներու կողմէ (Սողոմոն Թեւկիրեան, Արշաւիր Շիրակեան եւ ուրիշներ):
- 1921 փետրուար 21 – մարտի 14 – Մեծ տէրութիւններու Լոնտոնի խորհրդաժողովը:
- 1921 փետրուար 26 – մարտի 16 – Մասկուայի ռուս-թրքական երկրորդ խորհրդաժողովը:

- 1921 մարտ 16 – Ռուս-թուրքական «Բարեկամության եւ եղբայրության մասին» պայմանագրության կնքումը Մոսկովայի մէջ:
- 1921 ապրիլ 27 – Համազանգեզուրեան երկրորդ համագումարը Տաթևի վանքին մէջ. «Լեռնահայաստանի» հռչակումը:
- 1921 մայիս 21 – ՀՍԽՀ ժողկոմխորհի կազմաւորումը. Ա. Միասնիկեանին նշանակուիլը ժողկոմխորհի նախագահ:
- 1921 յունիս 1 – Լեռնահայաստանի վերանուանումը Հայաստանի Հանրապետութիւն:
- 1921 յունիս 3 – Լեռնային Ղարաբաղը (ՀՍԽՀ)-ի անբաժան մաս հռչակելու մասին դեկրետի ընդունումը:
- 1921 յուլիս 4 – ՌԿ(Բ)Կ Կովկասեան բիւրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղը ՀՍԽՀ-ին միացնելու մասին. յուլիսի 5-ին որոշումը փոխուեցաւ յօգուտ Ազրպէյճանին:
- 1921 սեպտեմբեր – Հայաստանի օգնութեան կոմիտէի (ՀՕԿ) հիմնումը (ջնջուեցաւ 1937 թ.):
- 1921 սեպտեմբեր 21 – ՀՍԽՀ ժողկոմխորհի դեկրետը չափահաս բնակչութեան անգրագիտութիւնը վերցնելու մասին:
- 1921 սեպտեմբեր 26 – հոկտեմբերի 13 – Կարսի խորհրդաժողովը:
- 1921 հոկտեմբեր 13 – Հայաստանի, Վրաստանի, Ազրպէյճանի եւ Թուրքիոյ միջեւ պայմանագրի ստորագրութիւնը Կարսի մէջ:
- 1921 հոկտեմբեր 20 – Ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը, Կիլիկիոյ յանձնումը Թուրքիոյ Ֆրանսայի կողմէն:
- 1921 նոյեմբեր 6 – Հայ-վրացական սահմանազատման մասին համաձայնագրի ստորագրումը Թիֆլիսի մէջ:
- 1921 դեկտեմբեր – ՀՍԽՀ խորհուրդներու առաջին ընտրութիւնները:
- 1922 յունուար 25 – Խորհրդային Հայաստանի առաջին պետական տրամատիկական թատրոնի բացումը:
- 1922 յունուար 30 – ՀՍԽՀ խորհուրդներու առաջին համագումարի բացումը:
- 1922 փետրուար 3 – ՀՍԽՀ առաջին սահմանադրութեան ընդունումը:
- 1922 մարտ 12 – Անդրդաշնութիւն կազմելու մասին, պայմանագրի հաստատումը Հայաստանի, Վրաստանի եւ

Ագրպէյճանի կենտգործկոմներու ներկայացուցիչներուն լիազօր խորհրդաժողովին:

1922 նոյեմբերի 20 – 1923 թ. յուլիս 24 – Լոզանի խորհրդաժողովը:

1922 դեկտեմբեր 10-13 – Անդրկովկասի խորհուրդներու առաջին համագումարը, Անդրկովկասի խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետութեան (ԱԽԴՍՀ) ստեղծումը:

1922 դեկտեմբեր 30 – Խորհրդային Սովետական Հանրապետութիւններու (ԽՍՀՄ-ի) կազմաւորման մասին հռչակագրի եւ միութենական պայմանագրերու ստորագրումը:

1922 Գեղարուեստի դպրոցի հիմնադրումը Երեւանի մէջ:

1923 Պետական երաժշտանոցի հիմնումը:

1923 Երեւանի առաջին ՀԷԿ-ի հիմնադրումը:

1923 յուլիս 7 – Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) ստեղծումը:

1923 նոյեմբեր – Դաշնակցութեան ինքնավերացման համագումարը Երեւանի մէջ:

1925 – Հ. Ադամեանի ստեղծած եռագոյն հեռուստատեսութեան եւ լուսահեռագրութեան սարքի ցուցադրումը Երեւանի մէջ:

1925 – Հայկական առաջին գեղարուեստական կինոնկարի՝ «Նամուսի» ցուցադրութիւնը:

1928 – Լենինականի ՀԷԿ-ի գործարկումը:

1930 – 1936 – ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջեանի պաշտօնավարութիւնը:

1930 – Գէորգ Ե. կաթողիկոսի վախճանումը:

1932 – 1938 ապրիլ – Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեգեանի գահակալութիւնը:

1932 – Հայաստանի գրողներու միութեան ստեղծումը:

1932 – Պետական ֆիլիհարմոնիայի կազմակերպումը:

1933 – 1940 Երեւանի արհեստական կաուչուկի գործարանի կառուցումը:

- 1935 – ԽՍՀՄ Գիտություններու ակադեմիայի հայկական մասնաճիւղի (Արմֆան) հիմնումը:
- 1935 – Հայկական առաջին հնչիւնային կինոնկարի՝ «Պեպոյի» ցուցադրութիւնը:
- 1935 – 1937 Հայաստանի գիւղացիութեան ճնշող մեծամասնութեան ընդգրկումը կոլտնտեսութիւններու մէջ:
- 1936 դեկտեմբեր 5 – ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրութեան ընդունումը:
- 1936 – 1939 եւ մինչեւ Ստալինի մահը 1953-ին – Զանգուածային ձերբակալութիւններ եւ բռնութիւնները, 1937-ը գազաթնակէտը եղաւ Երկրորդ եղեռնի մը հայ դեկավար տարրի, մտաւորականութեան ու կարեւոր դէմքերու պարագային: Աղասի Խանջեան, Եղիշէ Զարեմց, Ակսել Բակունց եւ շատ ուրիշներ զոհ գացին: Նաեւ աքսոր՝ Սիպերիոյ սառնամանիքները:
- 1937 մարտ – Խորհրդային Հայաստանի նոր սահմանադրութեան ընդունումը:
- 1938 օգոստոս 4 – ՀԿ(Բ)Կ կենտկոմի որոշումը Էջմիածնի վանքը փակելու եւ կաթողիկոսութիւնը ջնջելու մասին: Խեղդամահ ըրին Խորէն Ա. Մուրադբեգեան կաթողիկոսը:
- 1938 – Երեւանի Ա. Սպենդիարեանի անուան օփերայի եւ պալետի պետական թատրոնի բացումը:
- 1939 սեպտեմբեր 1 – 1945 սեպտեմբեր 2 – Երկրորդ աշխարհամարտը:
- 1940 յունուար 15 – Կ. Սիմոնեանի արժանանալը հերոսի կոչման, Երկրորդ աշխարհամարտի առաջին հայ հերոսը:
- 1941 յունիս 22 – 1945 մայիս 9 – Հայրենական մեծ պատերազմը:
- 1942 – Հայկական լեգէոնի կազմաւորումը:
- 1942 յուլիս 21 – Լ. Զափչախեանի արժանանալը ԽՍՀՄ հերոսի կոչման, Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ հերոսը:

1943 նոյեմբեր 29 – ՀԽՍՀ գիտություններու ակադեմիայի
հիմնադրումը:

1944 մայիս – «Սասունցի Դաւիթ» թանկային շարասիւնի
ուղարկումը ռազմաճակատ:

1945 մարտ 19 – ԽՍՀՄ կառավարութեան՝ 1925 թ. դեկտեմբերի
17-ի խորհրդա-թրքական բարեկամութեան եւ
չէզոքութեան պայմանագրի չեղեալ յայտարարումը:

1945 ապրիլ 19 – ԽՍՀՄ կառավարութեան ղեկավար Ի.
Ստալինի եւ կաթողիկոսական տեղապահ Գէորգ
Զորեքչեանի հանդիպումը Մոսկուայի մէջ:

1945 յուլիս 22-23 – Հայկական տարածքներու հարցի
քննարկումը Փոցտամի խորհրդաժողովին մէջ:

1946-1948 – Զանգուածային հայրենադարձութիւնը, աշխարհի
12 երկիրներէն շուրջ 90 հազար հայերու վերադարձը
հայրենիք:

1947 ապրիլ 30 – մայիս 4 – Հայկական համաշխարհային
գոնկրէսի գումարումը Նիւ Եորքի մէջ:

1949 յունիս 14 – Հայ բնակչութեան հոծ զանգուածի
արտաքսումը Ալթայի երկրամաս:

1953 մայիս 30 – Խորհրդային կառավարութեան պաշտօնական
յայտարարութիւնը Թուրքիայէն տարածքային պահանջ
չունենալու մասին:

1956 փետրուար – ԽՍՀՄ XX համագումարը Մոսկուայի մէջ:

1956 – Նուրբ օրկանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը:

1960 – Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի
հիմնադրումը:

1962 – Երկրորդ, աւելի սահմանափակ հայրենադարձութիւն:

1964 յունիս 25 – Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի
կոմիտէի ստեղծումը:

1965 ապրիլ 20 – Ուրուկուէյ նոր ժամանակներուն առաջին երկիրը կը դառնայ, որ կը ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը: Գործընթացը կը շարունակուի մինչեւ օրս, եւ մինչեւ 2024 32 երկիրներ եւ բազմաթիւ նահանգներ, քաղաքներ եւ միջազգային կազմակերպութիւններ կատարած են այդ ճանաչումը, որուն հետապնդումը ստանցնած է գլխաւորաբար Հայ դատի յանձնախումբը:

1967 – Երեւանի Ելեկտրոնային առագացուցիչի կառուցման աւարտը:

1972 – Ամերիկայի հայկական համագումարի ստեղծումը:

1975 – 1985 – Հակաթուրք ցուցական պայքար աշխարհի տարածքին:

1976 – Հայկական հիւլէականի առաջին էներգաբլոկի գործարկումը:

1978 – ՀԽՍՀ նոր Սահմանադրութեան ընդունումը:

1983 օգոստոս – Օսմանեան Թուրքիայի իրականացուցած Հայոց ցեղասպանութեան փաստի ճանաչումը Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի 6-րդ համագումարին:

1985 մարտ – Վերակառուցման քաղաքականութեան սկիզբը ԽՍՀՄ մէջ:

1987 յունիս 18 – Հայոց ցեղասպանութեան դատապարտումը Եւրոխորհրդարանի կողմէ:

1988 փետրուար – Ղարաբաղեան շարժման սկիզբը:

1988 փետրուար 20 – ԼՂԻՄ-ի մարզխորհուրդի պատմական որոշումին ընդունումը:

1988 փետրուար 22 – «Ղարաբաղ» կոմիտէի ստեղծումը:

1988 փետրուար 27-29 – Սումկայիթի հայութեան կոտորածը:

1988 յունիս 15 – ՀԽՍՀ գերագոյն խորհուրդի որոշումը ԼՂԻՄ-ի

- մարզխորհուրդի որոշումին դրական պատասխան տալու վերաբերեալ:
- 1988 յուլիս 18 – ԽՍՀՄ Գերագոյն խորհուրդի կողմէ ՀԽՍՀ ԳԽ-ի եւ ԼՂԻՄ-ի մարզախորհուրդի որոշումները չձանձնալը:
- 1988 դեկտեմբեր 7 – Սպիտակի աղէտալի երկրաշարժը:
- 1989 յունուար 11 – Յատուկ կառավարման ծելի սահմանումը ԼՂԻՄ-ի մէջ:
- 1989 օգոստոս 16 – Ազգային խորհուրդի ստեղծումը Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչութեան լիազօր ներկայացուցիչներու համագումարին:
- 1989 նոյեմբեր 4 – Հայոց համազգային շարժման առաջին համագումարի բացումը:
- 1989 դեկտեմբեր 1 – «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորման մասին» համատեղ որոշումին ընդունումը:
- 1990 յունուար 13 – 20 – Պաքուի հայութեան կոտորածն ու տեղահանութիւնը:
- 1990 մայիս 20 – ՀԽՍՀ Գերագոյն խորհուրդի այլընտրանքային ընտրութիւնները:
- 1990 օգոստոս 4 – ՀՀՇ վարչութեան նախագահ Լ. Տէր Պետրոսեանի ընտրուիլը Հայաստանի Գերագոյն խորհուրդի նախագահ:
- 1990 օգոստոս 23 – «Հռչակագիր Հայաստանի անկախութեան մասին» փաստաթուղթի ընդունումը:
- 1991 յունուար 29 – «Գիւղացիական եւ գիւղական կոլեկտիւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման եւ զարգացման մասին» արձանագրութիւններու ստորագրումը Ցիւրիխի մէջ:
- 1991 ապրիլ 30 – մայիս 7 – «Կոլցո» («օղակ») ռազմական գործողութեան իրականացումը:
- 1991 մայիս – 1994 մայիս – Ղարաբաղա-ազրպէյճանական պատերազմը:
- 1991 սեպտեմբեր 2 – «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման մասին» փաստաթղթի ընդունումը:

- 1991 սեպտեմբեր 21 – Անկախության հանրաքուէի անցկացումը Հայաստանի մէջ:
- 1991 սեպտեմբեր 23 – Հայաստանի անկախութեան հռչակումը:
- 1991 հոկտեմբեր 16 – Լ. Տէր-Պետրոսեանի ընտրուիլը ՀՀ նախագահ:
- 1991 դեկտեմբեր 8 – Բելովեժեան համաձայնագրի ստորագրուիլը:
- 1991 դեկտեմբեր 10 – Լեռնային Ղարաբաղի անկախութեան հանրաքուէի անցկացումը:
- 1991 դեկտեմբեր 21 – Խորհրդային Միութեան լուծարումը եւ ԱՊՀ-ի ստեղծումը:
- 1991 դեկտեմբեր 28 – ԼՂՀ Պերագոյն խորհուրդի պատգամաւորներու ընտրութիւնները:
- 1992 յունուար 7 – Դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումը ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ:
- 1992 յունուար 8 – Ա. Մկրտչեանի ընտրուիլը ԼՂՀ Պերագոյն խորհուրդի նախագահ:
- 1992 յունուար 28 – «ՀՀ պաշտպանութեան նախարարութեան մասին» որոշման ընդունումը, հայոց ազգային բանակի սկիզբը:
- 1992 մարտ 2 – ՀՀ-ի դառնալը ՄԱԿ-ի լիիրաւ անդամ:
- 1992 մարտ – «Հայաստան» համահայկական հիմնադրամի հիմնումը Երեւանի մէջ:
- 1992 մայիս 9 – Շուշիի ազատագրումը:
- 1992 մայիս 18 – Լաչինի ազատագրումը, Արցախի շրջափակման օղակի ճեղքումը:
- 1992 – Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի կազմաւորումը (1995 թուականէն Արցախի պետական համալսարան):
- 1993 նոյեմբեր – Հայկական ազգային արժոյթի՝ դրամի շրջանառութեան մէջ մտնելը:
- 1994 փետրուար 18 – Քելբաջարի շրջանի հիւսիսային մասի եւ Օմարի լեռնանցքի ազատագրումը:
- 1995 ապրիլ – Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող յայտարարութեան ընդունումը ՌԴ Պետական դումային կողմէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ
ADMINISTRATIVE DIVISION OF THE REPUBLIC OF ARMENIA



- 1995 յուլիս 5 – Խորհրդարանական ընտրությունները ՀՀ մէջ,
Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան
ընդունումը:
- 1995 դեկտեմբեր – ՀՀ վարչատարածքային փոփոխությունները,
մարզերու եւ համայնքներու ստեղծումը:
- 1996 – Հայկական հիւլէական ելեկտրակայանի
վերագործարկումը:
- 1996 նոյեմբեր – ԼՂՀ առաջին նախագահական
ընտրությունները:
- 1997 օգոստոս 29 – ՀՀ-ի եւ ՌԴ-ի միջեւ բարեկամութեան,
համագործակցութեան եւ փոխադարձ օգնութեան մասին
պայմանագրի կնքումը:
- 1998 փետրուար 3 – ՀՀ նախագահ Լ. Տէր-Պետրոսեանի
իրաժարականը: Իրեն պիտի յաջորդէ Ռոբերտ Քոչարեան:
- 1998 մարտ – Արտահերթ նախագահական ընտրությունները
ՀՀ-ի մէջ:
- 1998 – Պելճիքայի Ծերակոյտի եւ Ֆրանսայի Ազգային ժողովի՝
Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին
որոշումներու ընդունումը:
- 1999 յունիս 12 – Եռաստիճան դատական համակարգի
ներդրումը:
- 1999 սեպտեմբեր – Հայաստան-Սփիւռք առաջին
խորհրդաժողովը Երեւանի մէջ:
- 1999 հոկտեմբեր 27 – Արինալի ահաբեկչությունը ՀՀ Ազգային
ժողովին մէջ:
- 2001 յունուար 25 – ՀՀ-ի լիիրաւ անդամակցությունը Եւրա-
խորհուրդին:
- 2001 – Քրիստոնէությունը Հայաստանի պետական կրօն
հռչակելու 1700-ամեակի տօնակատարությունները:
- 2001 սեպտեմբեր 23 – Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
եկեղեցւոյ օծումը:
- 2002 նոյեմբեր – Համահայկական երիտասարդական առաջին
համաժողովը Երեւանի մէջ:

2003 սեպտեմբեր – Հայագիտական միջազգային առաջին համաժողովը Երեւանի մէջ:

2004 յուլիս – «Ոսկէ ծիրան» միջազգային առաջին կինոփառատօնը Երեւանի մէջ:

2004 օգոստոս – Համահայկական կրթական առաջին համաժողովը Երեւանի մէջ:

2004 օգոստոս 27 – «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» համահայկական առաջին փառատօնը Երեւանի մէջ:

2006 դեկտեմբեր 10 – ԼՂՀ Սահմանադրութեան ընդունումը:

2007 յունուար 19 – Հրանդ Տինքի սպանութիւնը:

2008 փետրուար 19 – Նախագահական հինգերորդ ընտրութիւնները ՀՀ-ի մէջ:

2008 մարտ 1-2 – Յետընտրական մթնոլորտի շիկացումը եւ ողբերգական դէպքերը Երեւանի մէջ:

2008 հոկտեմբեր – ՀՀ Սփիւռքի նախարարութեան ստեղծումը:

2009 հոկտեմբեր 10 – Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ միջև «Երկկողմ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման եւ զարգացման մասին» արձանագրութիւններու ստորագրումը Ցիւրիխի մէջ:

2010 ապրիլ 22 – ՀՀ նախագահի հրամանագրով հայ-թուրքական արձանագրութիւններու վաւերացման գործընթացի կասեցումը:

2013 – Նախագահական վեցերորդ ընտրութիւնները ՀՀ-ն մէջ:

2015 յունուար 29 – Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի որդեգրման յայտարարութիւնը նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ:

2015 դեկտեմբեր 6 – Սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէի անցկացումը:

2016 ապրիլ 2-5 – Քառօրեայ պատերազմը:

2020 նոյեմբեր 9 – Արցախի 44-օրեայ պատերազմի ամօթալի զինադադարը:

2023 սեպտեմբեր – Արցախի պարպումը:

2024 ապրիլ 24 – Չիլիի Ներկայացուցիչներու տունը Հայոց
ցեղասպանութեան ճանաչման ի նպաստ նորագոյն
որոշումը կ'անցընէ:

(Այս ցուցակը մեր կողմէ արեւմտահայերէնի ու դասական
ուղղագրութեան վերածուած է՝ դասագիրքէն առնուած
բովանդակութեան վրայ որոշ յաւելումներով)

ԿԱՆՁ Զ'ԱՌՆԵՐ ՍԱԿԱՅՆ ՀԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՅԼ ԱՐԲԻՐՆԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՏԼԱՍ / HISTORICAL ATLAS OF ARMENIA, խմբագիր՝ Վարդան Մատթեոսեան, Ազգային ուսումնական խորհուրդ, Նիւ Եորք 2012, 109 էջ:
2. Ա. Մելքոնեան եւ համահեղինակներ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ 12 – Նորագոյն շրջան, Հումանիտար հոսք, Բ.՝ լրամշակուած հրատարակութիւն, Զանգակ հրատարակչութիւն, Երեւան 2016, 321 էջ:
3. Կլոդ Արմէն Մութաֆեան, Էրիկ Վան Լով, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՏԼԱՍ – Մերձաւոր Արեւելքը եւ Հարաւային Կովկասը – մ.թ.ա. VII դարից XXI դար, թարգմախչ եւ հրատարակիչ՝ Արմէն Բաղդասարեան, Երեւան 2017, 144 էջ:

ՇՆՈՐՀԱԿԱՆԻՔ

Այս հրատարակութեան աշխատանքին իրենց մասնակցութիւնը բերին գլխաւորաբար՝

- Յասմիկ Տէր Պետրոսեան (առաջին հրատարակութիւնը մեքենագրելով):
- Սոնա Թիթիգեան-Կէտիկեան (ներկայ հատորը շարագրելով):
- Ռազմիկ Պերթիգեան (տրամադրելով իր գեղանկարները, որոնցմէ քաղուած են սոյն հատորին մէջ երեւցող հատուածները):
- Անուշաւան արքեպիսկոպոս Դանիէլեան (քարտէզներու օգտագործման արտօնութիւնը տալով):
- Խաչատուր Ստեփանեան (Հայոց պատմութեան դասագրքի թուայնացած օրինակը տրամադրելով):
- Անոյշ Ակներեան (գեղարուեստական ձեւաւորումը կատարելով):
- Վրէժ-Արմէն Արթինեան (խմբագրելով ներկայ հատորը):

Բոլորին՝ մեր շնորհակալութիւնները:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի
դաստիարակչական յանձնախումբ